

Звездочка

“


ՄԻՀՐԱՆ ՆԱՃԱՐԵԱՆ

Յ Ո Ւ Շ Ա Գ Ի Ր Ք

1918 — 1948



ԽՐԵՄԻՆԻԱՅԻՆ ԱԶԳԱՅԻՆ ԻՐԱԳԱՐՁՈՒԹՅՈՒՆՆԵՐ
ՍՈՒՐԻՈՑ ՆԻ ԼԻԲԱՆԱՆԻ ՀԱՅ ԿԵԱՆՔԻՆ ԱԹՆՈՒԱԾ



ՏՊԱՐԱՆ ՄԱՍԻՍ

ՊԵՐՄ ք

1949



9/ - 91.99/ 1935

Ն-27 | Նաճարյալ Մ.

Նաճարյալ 1918-1948:

✓
A. YACOBIAN
INSURANCE
4037 1/2 W. Adams St
Los Angeles -

ՄԻՀՐԱՆ ՆԱՃԱՐԵԱՆ

9(=91.99)
2-27

9(=91.99)

Յ Ո Ւ Շ Ա Գ Ի Ր Ք

1918 — 1948

1935

ԵՐԵՄՆԱՄԵԱՅ ԱԶԳԱՅԻՆ ԻՐԱԳԱՐՁՈՒԹԻՒՆՆԵՐ
ՍՈՒՐԻՈՅ ԵՒ ԼԻԲԱՆԱՆԻ ՀԱՅ ԿԵԱՆՔԷՆ ԱՌՆՈՒԱԾ

A $\frac{11}{80315}$

ՏՊԱՐԱՆ ՄԱՍԻՍ

ՊԵՐՈՒՔ

1949



AMERICAN

AMERICAN

AMERICAN

9 7 4 7 5 4 0 8

8401 - 8101

AMERICAN

AMERICAN

AMERICAN

AMERICAN



ՄԻ ՔԱՆԻ ԽՍՈՒՔ

Յուշագիրք անունի սակ լոյս ընծայուած այս փոքրածալ գրեկը չենք ներկայացնել իբրեւ կատարելաւ ու անքերի գործ մը: Յուշերու ծաղկաստանէն քաղուած մի քանիսը միայն կը հրամցենք մեր յարգելի ընթերցողներուն, պարզապէս յաջորդող Սերունդին մաքրասիրտ հոգիները գունաւորելու համար առաջին աւշարհաւեր մեծ պատերազմին հայ ժողովուրդին տուած մէկ միլիոնէ աւելի զոհերուն — մահախրոսացուած նահատակներուն արիւնովը:

Երեսնամեայ այս յուշերը բոլոր հայ մասնադարաններու մէջ ապագայ հայ պատմագիրներուն համար նիւթի աղբիւրներ դառնան, կարենալ վաղուան նորահաս սերունդը գիտակ պահելու համար իր անցեալի իշխումը կամ բերկրալիւ անցքերուն:

Մ. Ն.

12 Փետրուար 1949

Պէյրուք

Ծ Ա Ն Օ Յ Ո Ւ Յ Ի Ի Ն

Յուշագիրքս կը ձօնեմ իմ անգուղա-
կան վարպէսիս եւ մեծ հայրենասէր, հր-
մուտ հնազեց գեղազոր՝ Ռուբէն Էնգանեանին
(Ռ. Գեղունի), եւ որուն ՉՈՐՈ ՄԵՆ ՌԻԺԵՐ
խորագրին սակունեցած օրինակելի մեկ գր-
քութեամբ կը սկսինք մեր ամփոփ յուշե-
րուն։—

ՉՈՐՈ ՄԵՆ ՌԻԺԵՐ

Չորս մեծ սեմեր կան կենդանի աշխարհին
վրայ. — Գեղեցկութիւն, Զօրութիւն, Հարստութիւն
և Գիտութիւն, որոնք մարդիկ կը պաշտեն և տնտեց
կտտարելապէս տիրանալու համար ջանք չեն խնա-
յեր։

Բայց տնտեցմէ տմանց բնատուր ըլլալու հան-
գամանքը և ոմանց անսահմանութիւնը՝ կամ կեան-
քին կարճատևութիւնը պատճառ կ'ըլլայ որ կա-
տարեալ յաջողութիւնը տարակուսանքի ենթարկուի
զանիկայ ձգելով միշտ համեմատականի վրայ։

Այսու հանգերձ՝ ունէ տնձ՝ կրնայ զոհաբեր
տալ իր յիշեալ փափաքին՝ երբ — իրեն կարողու-
թեան սահմանին մէջ — ջանայ և փնտռէ տնտեցմէ

առաջինը՝ պարզութեան համ պարկեշտութեան մէջ
երկրորդը՝ ֆիզիքսական քաջասովջ ըլլալ և անոր
կանոնները լիովին յարգելով՝ երրորդը՝ աշխատու-
թեան և սեփական իրաւունքէն զոճացած կերպովը
իսկ չորրորդը՝ զոյն սիրելու և անոր տիրանալու
համար յարատեւել ու գիտցածը մարդկութեան օգ-
տին գործածել:

Պէյրուք 1928

ՌՈՒԻՔԷՆ ԷՃԶԱՃԵԱՆ



ՌՈՒՔԷՆ ԷՃԶԱՃԵԱՆ
Գեղարուեստ — Հնարչութիւն



ՌՈՒԲԷՆ ԷՃՁԱՃԵԱՆ
Պեղագործ — Հնգրդես

Հ Ա Լ Է Պ

Ա. ՄԱՍ

Հայեպի Անկումը, Խրախնանք, Հայ Վերապրող-
ներ, Հայրենակցականներ, Միջ—Գաւառային, Ազգ.
Միութիւն, Միքինկ, Համազգային առաջին Մեծ Սգա-
սօն, Հրահասարակական, Համերգ, Աշխատանքի Տուն,
Ներգաղթ, Յուսախաբութիւն, Վարձատրողագիր Վկա-
յական մը:

Հանրային հասարակական, Ընկերային և նա-
մանաւանդ՝ աղջային կեանքին ու ապրումներուն
ընթացքին կը պատահին բախտորոշ ու ճակատագր-
րական ա՛յնպիսի դէպքեր, իրադարձութիւններ կամ
դրամագներ՝ որոնք պատմագրի ուշադրութենէն չեն
կրնար վրիպիլ:

Առաջին աշխարհուեր պատերազմին իրրե հե-
տեւանք բազմաթիւ քաղաքներու կարգին բացառա-
պէս Հալէպի տնկումը բովանդակ Հայտնական հա-
մար ճակատագրական խիստ կարեւոր դէպք մը
պէտք է նկատել, որովհետեւ հարիւր հազարի մօտ
հաշուով հայ տարագիրներու մեծ գտնուումը մը
կեդրոնացած ըլլալով Սուրիոյ այս պատմական ու
գեղեցիկ քաղաքին մէջ, որոնք վերապրումի ոչ մէկ
նշոյլ չունէին, սակայն մեր թշնամիին լիարժեքումն
միջիւ աիրող խորունկ տարակարծութիւններուն շը-
նորհիւ և Արաբ ազատասէր և անկախասէր ժողո-
վուրդի մարդասիրական ու բարի կամեցողութեան

հետեւանքն էր որ Հայ վերապրողներու յիշեալ պատկառելի բազմութիւնը կրցաւ Հալէպի անկումովը վերստին յարութիւն առնել։ Հոս արգար ըլլալու համար պէտք է խոստովանիլ որ առաջին աշխարհաւեր մեծ պատերազմին մէջ համաձայնականներու ձեռք բերած յաղթանակին պատճառաւ Հայ ազգին պէս շատ մը փոքր տղքեր ևս կրցին իրենց հաւաքական գոյութիւնը արժեցնել դառնալով իրական և իրաւական գեանի վրայ մէյմէկ փոքրիկ պետութիւններ։ ասոնք են՝ Իրաք, Սուրիա, Լիբանան, Պաղեստին, ևլն։

Այս մասին տւելի մանրամասնութեան մանել չենք փորձուիր, գիտնալով անշուշտ թէ՛ ժամանակակից միջազգային մոմուլը օրը օրին տիրող իրադարձութիւններու ու դէպքերու նկարագրականները պատմագրական արժէքաւոր տողերով լոյս ընծայած է։

Հալէպի անկումը առաւելապէս կ'արժէքաւորուի երբեմնի աշխարհակալական ձգտումներ սւնեցող Գերմանիոյ և ազգայնամուլ Թուրքիոյ անսպասելի անկումովը, որովհետեւ՝ Արարայի հայկական մեծ հերոսամարտը դուռ բացաւ ոչ միայն յիշեալ միապետական խմորով չաղուած երկու պետութեանց անխուսափելի պարտութեան, այլ նաեւ՝ փրկարար վճռականութեամբ մը համաձայնական ուժերը վերջապէս զրին չորս արիւնահոտ սարիններու փոխորկումին և աշխարհը առաջնորդեցին դէպի իսկալականութիւն, դէպի բնկերային զարքնում։ Ինչպէս որ գիտենք Հալէպի անկումէն անմիջապէս վերջ չու-

չափաւ գինադադարի զօդանջը հնչելու մամբ և երկու վայրագ պետութիւնները պարտադրաբար վարդարին իրենց զէնքերը ու խոնարհեցան արգարութեան սկզբունքով ձեռք բերուած անմասնաւոր յաղթանակին առջեւ :

Հալէպի անկումովը երեւան եկան կարգ մը իրողութիւններ, որոնք ազգերու պատմութեան մէջ օրինակելի երեւոյթներ կրնան նկատուիլ : Այն օրը երբ համաձայնական ուժերը, նա մանաւանդ՝ Բրիտանական բանակը աջ կազին ունենալով արարական քաջարի զօրամասերը երբ մուտք գործեցին Արաբիոյ այս պատմական քաղաքէն ներս, մենք տեսնեմք որ երբեմնի կարծեցեալ թուրք զօրավարներ արար քաջարի զօրամասերու գլուխը անցած բանակը կ'առաջնորդէին զէպի յաղթանակէ յաղթանակ, թշնամին անպատուութիւն նահանջի մը մատենելով :

Քաղաքին անկումին յաջորդող օրը յաղթական զօրամասերը բնակչութեան ապատութիւն տուին իրենց խրախճանքներով համակրութիւննին արտայայտելու համաձայնական ուժերուն հանդէպ : Ղարձեալ ազգերու պատմութեան մէջ աննախընթաց երեւոյթ մը կրնանք հաշուել Հալէպի անկումին տութիւն ստրքուած խրախճանքային հանգիստաւորութիւնները : Քրիստոնեայ և իսլամ տարրերը ջերմօրէն եզրայրակցած իրարու, առաւօտեան արեւածագէն շատ առաջ գունդ առ գունդ գիմեցին քաղաքին կեդրոնը և այս բաղմահազար ու բաղմացեղ տարրերու միաւորումով կազմուեցաւ հանգիստաւոր թափօր մը, որոնք մինչև երեկոյ քաղաքին բոլոր թաղամասերը

հետեւանքն էր որ Հայ վերապրողներու յիշեալ պատկառելի բազմութիւնը կրցաւ Հալէպի անկումովը վերստին յարութիւն առնել: Հասարակարար ըլլալու համար պէտք է խոստովանիլ որ առաջին աշխարհաւեր մեծ պատերազմին մէջ համաձայնականներու ձեռք բերած յաղթանակին պատճառաւ Հայ ազգին պէս շատ մը փոքր ազգեր ևս կրցին իրենց հաւաքական գոյութիւնը արգեցնել զառնալով իրական և իրաւական գեանի վրայ մէյ մէկ փոքրիկ պետութիւններ. ասոնք են՝ Իրագ, Սուրիա, Լիբանան, Պաղեստին, ևլն.:

Այս մասին աւելի մանրամասնութեան մանեկ չենք փորձուիր գիտնալով անշուշտ թէ՛ ժամանակակից միջազգային մամուլը օրը օրին աիրող իրագարծութիւններու ու դէպքերու նկարագրականները պատմադրական արժէքաւոր տողերով լոյս ընծայած է:

Հալէպի անկումը առաւելապէս կ'արժէքաւորուի երբեմնի աշխարհակալական ձգտումներ ունեցող Գերմանիոյ և ազգայնամուլ Թուրքիոյ անսպասելի անկումովը՝ որովհետեւ՝ Արարայի հայկական մեծ հերոսամարտը դուռ բացաւ ոչ միայն յիշեալ միապետական խմորով չաղուած երկու պետութեանց անխռնաստիւղի պարտութեան, այլ նաեւ՝ փրկարար վրձնականութեամբ մը համաձայնական ուժերը վերջակէտը դրին չորս արիւնահոտ աարիներու փոթորիկումին և աշխարհը առաջնորդեցին դէպի իսթալալկանութիւն, դէպի ընկերային զարթոնք: Ինչպէս որ գիտենք Հալէպի անկումէն անմիջապէս վերջ չու-

չրջելով օրհնութեան աղաղակներ կը բարձրացնէին
սրատուսի ջերմեւանդութեամբ մը փրկարար բա-
նակներու հասցէին և կեցցէներով ամբողջին սրտ-
տուժի պէս օգը կ'ալեկոծէին:

Այս խորխճանքին մէջ կարեւոր դեր մը վե-
րապահուած էր նաեւ մեր այն վերապրող հարիւր
հազարի մօտ Հայ ժողովուրդին: սրտեց մահալճիւր
գողանի պաշտօնագրերով վաւերացուած էր Պերլինի
հրահանգով Երլազի վայրագներուն կողմէ: վերապ-
րողներուն մէջ պատկառելի թիւ կը կազմէին նաեւ
Հայութեան ընտրանի գաւազարդ մը: և կամ ըլլալով
կ. Պսլէն կամ արուարձաններէն: կիլիկիոյ գանա-
զան չրջաններէն և կամ այ տաճկահայաստանի ներ-
քին գաւառներէն: Հայ վերապրողներու շարքին
նշմարելի թիւ մը կը կազմէին միանգամայն թրքա-
կան բանակի բարձրաստիճան հայ սպաներ: բժիշկ-
ներ: գեղագործներ, անասնաբուժեր և Պսլոյ գին-
ւորական բարձրագոյն վարժարանէն չրջանաւարտ
հայ սպաներ: իրախճանքին օրը հայ վերապրողնե-
րուն աչքերուն մէջ երկու բան կարելի էր կար-
գալ: մին՝ ուրախութիւն իսկ միւսը՝ արամութիւն.
ուրախութիւն՝ անոր համար, որ անյուսութեան
մտանդաւած բաղձահաղար Հայութիւնը փրկուած էր...
այլեւս: իսկ արամութիւն՝ անոր համար: որ աշխարհ-
աւեր պատերազմը հայ ժողովուրդի ծոցէն խլած էր
իր մէկ միլիոնէ աւելի թանկագին գաւաղները. ա-
սիկա ազգերու պատմութեան գլխաւոր ու ամենաուր-
խուր էջերէն մին կը կազմէր. մարտակի ստեղծու-
մէն ի վեր սեւէ պատմագիր չկրնար մեզ նշել այս

օրինակ վայրագութիւն մը. ոչ մէկ ազգ չպիտի
կրնար հանդուրժել այս կարգի մեծ զահաղութեան
առջեւ: Ասկայնչ հայ ժողովուրդը իբրեւ իր նախ-
նիքներուն հարազատ ժառանգորդը՝ փոխանակ վը-
րէժխնդրական սգիով առաջնորդուելու, զիմեց իր
ձեռնհասութեան, միշտ ապուսինած ըլլալով իր ժո-
ղովուրդի անպարտելի կամքին:

Երբ խրախճանքներն ու հանդիսաւորութիւն-
ները վերջ գտան, հայ վերադրողներուս առաջին
գործը եղաւ անմիջապէս աշխատանքի լծուիլ ու
հայրենասիրական ձեռնարկներ յառաջացնել: Քաղա-
քին բոլոր հայ տարրերը համերաշխական գնահա-
տելի սգիով մը սկսան միութենական ու հայրենակե-
ցական կողմակերպութիւններ ստեղծել: չկար դա-
ւառ մը որ չունենար իր հայրենակցականը ու այս
նորածիլ հայրենակցականներու կողմէ՝ յառաջ տար-
ուած ազգանուէր աշխատանքը որոշ ու փրկարար
դեր մը կատարեց իրարօգնութեան տեսակէտով:

Երբ տմէն դաւառ ունեցաւ իր հայրենակցա-
կանը, հայ վերադրողներուս մէջ աւելի ուժգնօրէն
նշմարուեցաւ միահամուր աշխատանքին գաղափարը.
այս իսկ նկատուամով դոյնութիւն ունեցող բոլոր հայ-
րենակցականներու կողմէ նշանակուած երկուքական
լիազօր ներկայացուցիչներու մասնակցութեամբ
կողմուեցաւ մարմին մը Միջ—Գաւառային Հայ Մի-
ութիւն անունի անկ գործող և իբրեւ իրաւասու
խորհուրդ մը, և այս ներկայացուցչական խորհուր-
դին օրինաւոր գեանի վրայ ընտրուած եւթ ազգա-
յիններէ բաղկացած վարչութեան մը բացարձակ լի-

աղօրութիւնն արուեստը վարելու հայ վերապրողներու քաղաքա—անաստեղծան և մշակութային բոլոր գործերը:

Այն տառն զոյութիւնն ունեցող աղգերու զաշ—նակցութեան կողմէ նշանակուած ֆրանսական պատ—ուիրակութիւն մը գլխաւորութեամբ Գնդապետ Կլաւս—քարիչ որը արտօնուած էր վարելու ներգաղթի գոր—ծըն Բիջ—Գաւառային Հայ Միութիւնը միակ օրի—նաւոր և իրաւասու մարմինը ճանչցուեցաւ որ կըր—նար յիշեալ պատուիրակութեան հետ ներգաղթը կողմակերպել ու հովանաւորել:

Միւս կողմէ վեհափառ Սահակ Բ. Կաթողիկոս իրապաշտան կը շրջէր ամենուրեք ու նշանակովի Ազգ. Միութիւնն անունի տակ մարմիններ կը ստեղ—ծէր: Ազգային Միութեան կողմութիւնը կ'ապահով—ուէր զոյութիւնն ունեցող քաղաքական կուսակցու—թեանց երեք քոյր յարանաւանութեանց և անկու—սակցականներու երկուքոյնն ներկայացուցիչներովը: Այս մարմինը ունեցաւ իր օգտակարութիւնը: Հալէ—պի մէջ կողմուած Ազգ. Միութեան կը նախագահէր յայտնի բժշկապետ Ա. Ալթունեանը իսկ տառնապե—տութիւնը կը վարէր բոլոր հայ վերապրողներէն մե—ծաղէս սիրուած ու յարգուած Հ. Գաբրիէլ Վրդ. Գասպարեանը:

Բերկրութեամբ խանդավառուած տարազիր հայ վերապրողներուն համար Ազգ. Միութեան մը կող—մին օրինաւորութիւնը աշնքան հետաքրքրական էր որքան համերաշխութիւնը աւետող որեւէ ձեռնարկ—այս իսկ պատճառաւ հայ տարազիրներն ոչ—գեմով—



Mr. Guernsey and his wife
P. H. H.

րատական ձեւի տակ ընտրուած Ազգ. Միութիւնը նկատեցինք իբրեւ հեղինակութիւն ունեցող վերին մարմին մը և անոր կեցուածքը խանդարող ուէ վորձէ զգուշացանք: Այսպէս, հայ կեանքին մէջ աննախընթաց այս երեւոյթը թէեւ կործառեւ կեանք ունեցաւ և անգոհացուցիչ վախճանի մը յանգեցաւ, բայց անոր մեր վրայ թողուցած ներգործիչ ազդեցութիւնը անմոռանալի յիշատակներ դրօշմած է մեր սրտերուն մէջ: Վերապրող տարագիր հայը չկրնար և չպիտի կրնայ մոռնալ նախորդ աշխարհաւեր մեծ պատերազմէն անմիջապէս վերջ Հալէպ հաւաքուած հայութեան միասնականութիւնը յայտնաբերող կենդանի պատկերը. չեն կրնար յիշել չրջան մը ուր հայ ժողովուրդը այդ օրինակ սիրով ու համերաշխութեամբ իրարու շողկապուած ըլլայ ըստ մենք նշենք միմիայն մեր յուշերը ու լուսնութեամբ անցնինք այդ քաղցրիկ անցեալի վրայէն:

Մ Ի Թ Ի Ն Կ

Նոյեմբեր 11ի գինադադարէն յետոյ կազմակերպուած հայ վերադրողներուն գլխաւոր մտահոգութիւնը եղաւ հայկական գաղին արդար լուծում մը ձեռք բերելու համար անհրաժեշտ օրինաւոր միջոցներու գիմել ու պահանջել քաղաքացարար մեր ժողովուրդէն բանութեամբ խլուած իրաւունքներուն անմիջական վերադարձը իր իսկական իրաւատիրոջ:

Երբ մէկ կողմէ կրտսրիոյ կեդրոն քաղաքներուն մէջ տպաստան դաւած տարագիր հայութիւնը կազմակերպչական լուրջ ու ծանր աշխատանքին լծուած

էր, միւս կողմէ Բարիգի զօյգ ազգ. պատուիրակութիւններէն առաջուած նորանոր հրահանգները մեզ տեսակ մը կը պարտադրէին ԱՆՀԵՒՍՏԵՍ ձեռնարկներ յառաջացնել. տանցմէ անմտանալի յիշատակ մը կը թողու մեր մտքերուն մէջ 1918-ին Հալէպի Քառասուն Մանկանց Եկեղեցւոյ մէջ զամարուած համազգային մեծ միթինկը. այդ երանելի... միթինկով տարադիր հայութիւնը հարիւր հազար հայերու բերանով և Բարիգի ազգ. զօյգ պատուիրակութեանց խողովակով այն տանն զոյսութիւն ունեցող Վեհաժողովին կը պահանջէր տաճկահայտատանի եօթը գլխաւոր նահանգներուն անմիջական կցումը Անդրկովկասի մէջ արդէն իսկ զոյսութիւն ունեցող նորածին Հայաստանին:

Ակնարկուած միթինկը օրինակելի էր միմիայն իր միտանական կեցումովն ու համահայկական բնոյթովը՝ սրբան քաղցրիկ երեսօթ... Հայութիւնը կը ներկայացնէր ամբողջականութիւն մը և կարծեւ թէ՛ զոյսութիւն ունեցող քաղաքական հասանքները իրարու մէջ ձուլուած ըլլային: Միթինկը անցաւ խիստ օրինակելի կարգապահութեամբ մը՝ բանաձեւում արդար մեր պահանջը հետադրով հազարդանցաւ Բարիգի զօյգ պատուիրակութեանց: Արդիւնք...:

Ա Պ Ա Տ Օ Ն Է

Հալէպ հաւաքուած հարիւր հազարի մօտ հայ տարադիրները չէին կրնար անտարբերութեամբ ու

A u
80315

լուծութեամբ անցնիլ իրենց տուած մէկ միլիոնէ աւելի զահիրու վրայէն: Ազգ. Իշխանութիւնները կազմակերպեցին ընդհանուր նահապետաց առաջին մեծ սգահանդէսը. այս սգահանդէսին համազգային գոյն մը տրուած էր. և Հայ անունը կրող սեւէ անհատ չէր կրնար քարսիրտ անտարրերութեամբ մը գիտել առաջադրուած ձեռնարկը. բոլոր գաւառացիները ա ն ի ս ա ի ր յ բոլոր հասանքներն ու երեք ք ո յ ր յարանուանութիւնները միասնաբար կազմակերպեցին պատմութեան մէջ իր նմանը չսեանդուած սգատօն մը: այս սգատօնը բաժնուած էր երկու մասի: առաջին մասով ծովածաւալ թափօր մը խիստ կարգապահութեամբ ու առաջնորդութեամբ Ամանտաի երեսուն երեք անպարտելի հերոսներուն Գաւառսուն Մանկանց եկեղեցիէն ձամբայ ելաւ. գէպի Հայոց գեղեղմանտառներ. թափօրին կ'ընկերաւոր Տիգրանակերտցիներու նորակազմ ֆաֆառայ Շտրէնեան մահերգ: լուծիւն ու յարգանք կը պարտադրէր թափօր: գիտող բազմահպարտ օտարազգիներուն: Իրաքանչիւր գաւառ առանձին խումբերու բաժնուած և իրենց խորհրդաւոր ծաղկեպսակներով կը մասնակցէին այս սուգին: զինուորականներ ու քաղաքացիներ զգուշաւոր յարգանքով կը գիտէին այս թափօրը երբ սղակիրները հասան Հայոց գերեզմանատանը: ու երբ Զէյթունի երբեմնի հերոս Բարթոլոմէոս Վարդապետ սգաբեմին վրայ բարձրագույն ու զսղուող ձայնով մը կ'աղերսէր առ Աստուած որ իր մէկ միլիոն անմեղ զահիրը հանգստի հանգրուան մը կարենան գտնել հանդիսակցի մէջ:

49.35

80315



ուչ միայն բոլոր սգակիրներու աչքերէն արիւն ար-
ցունք կը հոսէր այլ նաեւ՝ բնութիւնն ալ կուլար
հոյ անմեղ գոհնուն վրայ՝ մոպամած երկին-
քէն մեղմօրէն մարդարտանման անձրեւի կաթիլներ
հոսեցնելով սգակիր բազմութեան վրայ։ Լացինք
բոլորս և մեր լացէն սգդուեցան քարերն անգամ-
կէս օրուան մօտ գագաղ չուենցօղ յոգնաբեկ թափօ-
րը միւսնոյն կարգապահութեամբ և միւսնոյն օրի-
նակելի կազմով վերադարձաւ Քառասուն Մանկանց
եկեղեցին։ Կէս օրէն անմիջապէս վերջ յիշեալ եկե-
ղեցւոյ կոչնակը մեղմօրէն կը ձայնէր ժողովուրդին
շարունակել իրենց սուգն ու լացը։ Իւրաքանչիւր
վերապրող ունէր մէկէ շատ աւելի կորստածներ ու
չէր կրնար աչքերէն հեղեղի պէս հոսող արցունքնե-
րուն կաթիլները գաղբեցնել գովանալու համար
վայրկեան մը գէթ ժամը երեքին (կ. վ.) յիշեալ
եկեղեցւոյ լայնատարած սրահէն ներս մուտք կը
գործէին բարձրատախճան գինուորականներ։ Վանա-
ղան պետութեանց գիւանդախառնան ներկայացու-
ցիչներ։ Նիւպատոսներ։ Օտարաղբի կղերական պե-
տեր։ Երագրողներ և ինչ որ քանակ առճար կուգայ
Բարթողիմէոս վարդապետ շրջապատուած քահանայ
հայրերէն։ Սրտնք զգեստաւորուած էին օրուան
պատշաճ եկեղեցական տարազներով։ Հայկական մե-
ղեղին անգամ մը ևս կը քղձկէր սգաւոր հանդիսա-
կաններուն արդէն իսկ ընկճուած սրտերը։ Սահր
խիստ տղաւորիչ ու խորհրդաւոր էր ու երբ հա-
մադդային այս մեծ սգատօնը կը վերջանար բոլոր
վերապրողներու շարքին օտարներն անգամ ցաւակ-

ցական բառերու հոլովումով վրէժխնդրական ապառ-
րիչ բառեր արտասանելով կը բաժնուէին սգաւոր
վերապրողներէն։ Այս կերպով հարիւր հազար Հայ
վերապրողներ իրենց մէկ միլիոնէ աւելի ունեցած
նահատակներուն յիշատակը յաւերժացնելու և անոնց
հանդէպ մատուցած յարգանքի առաջին աւերքը վը-
ճարած ըլլալուն համար հոգեկան հրճուանք մը կը
զգային։

Յիւրիցս անգամ յարգանք ընդհանաւր Հայ
նահատակներուն։

Հ Ր Ա Տ Ա Ր Ա Կ Չ Ա Կ Ա Ն

Հայ մշակութիւնը ամենազմեղակ պայմաններու
ներքեւ իսկ դադար չէ աւած։ Հայ արուեստագէտն
ու մտաւորականը երբէք չեն գիտցած վերջակէտ մը
դնել այն կուրուերային։ Որուն չնորհիւ միայն պի-
տի կարենային կրմեններու ցեղը արժէքաւորել.
անցեալ դարերու մէջ իսկ զօրաւոր փաստեր ունինք
մենք զմեզ համոզելու որ հայ ժողովուրդի գլխաւոր
մահազուլթիւններէն մին եղած է իր սահմիկ կեան-
քին աւրնիթեր՝ շարունակել նաև մտամշակութային
կամ ինքնազարգացման ճանապարհով առաջնորդ-
ուիլ. այսպէս եղած են Ս. Մկրտապներն և մեր այ-
րուքենի հրաշալի գիւտէն ներշնչուած յաջորդող սե-
րուելը։

Պատմութեան այն մեծ ճգնաժամին։ ուր հայ-
կական թաղաւորութիւնը իր յաջորդական ընկրկում-
ներով վերջապէս ալ պիտի հարկադրուէր լքել իր

գահը Մտղղէականութեան շունչին տակ: Պանուեցան երկու գէմքեր, հեռատես միտքով և իրական հայրենասիրութեամբ օժտուած, որոնք տեսան Հայութեան առջեւ փարսած անդունդը և ուզեցին զայն լեցնել ուժով մը որ կտրող ըլլար զօրութեան և խանդի նոր երակներ բանալ հակառակութիւններով թուլցած հոգիներուն խորը: Եւ ջանացին գրին ու գրականութեան ստեղծումով, սե ու շարարտա օրերու մէջ երազուած լուսաշող կարեկիութիւնները իրականութիւններու վերածել:

Իհր այս օրուան գոյութիւնը իրբեւ ուրոյն ազգ, ապացոյցն է անոնց գերմարդկային ջանքերուն և յաղթանակը անոնց հոյակապ ու սրբազնագոյն նպատակին:

Հայ մտաւարդը իր գրին ու գրականութեան ջամբումով փարձուած է շարունակել հայ հանճարեղ մտքերուն կողմէ ստեղծագործուած ծաղկաբոյր ճանապարհը և տօկա հայ ցեղին համար ապահոված է յաջող ելք, վարդազոյն վախճան:

Տարագրութիւնը մտցնել չէր տուած մեզի մեր ցեղային յատկութիւններէն ամենակարեւորը. ջարդ, հալածանք, գրկանք չէին կրցած յաւաքել մեզ, թերեւս ո՛րք էր պատճառը որ Հալէպի մէջ գանուող տարագիր մտաւորականութիւնը չթերացաւ իր ցեղային յատկութեանց սրբազնագոյնին հանդէպ ունենալիք կեցուածքին մէջ. անմիջապէս՝ երբ վերապրողներս ինքնամփոփման շրջան մը բոլորեցինք, զգացինք կենսանիւրի մը պակասը, այդ կենսանիւրը կը կողմէր ինքնազարգացման հարցը, հայ արուես-

տաղէտն ու մատառականը սկսան պրպտումներ կատարել մտամշակութային գեանի վրայ անոնք նորանոր նիւթեր որոնեցին որոնցմով կարելի պիտի ըլլար նորահաս սերունդը պատրաստել իբրեւ տպագայ արժանի ժառանգորդը Հայ ցեղին. հրատարակուեցան մեծ ու փոքրիկ ծաւալ ունեցող շինիչ բովանդակութեամբ զարդարուէն գրքեր կամ դրքոյկներ, յաջորդաբար լոյս տեսան թերթեր «Եփրատ» հոօրեայ (օրկան՝ Ս. Դ. Հնչակեան կուս.), «Տարազիւր» շաբաթաթերթ (օրկան՝ Հ. Յ. Դ. կուս.) և «Հայ Ջայն» շաբաթաթերթ (օրկան՝ Ռ. Ա. կուս.):

Վերոյիշեալ առաջին թերթին խմբագրութիւնն ու վարչութիւնը կը վարէին Տօքթ. Գ. Մուշեան, Մ. Նաճարեան, Վ. Գաբրանֆիլեան, Ն. Նալպանտեան և Մ. Պատմաճեան: Երկրորդ թերթին խմբագրութիւնը կը վարէին Մելիտոնեան և Խաչերեան, իսկ երրորդ թերթին արածոնատէր ու խմբագիրն էր Ս. Կէպէնլեան:

Յիշեալ երեք թերթերէն զաւել հրատարակուած «Սուրիական Մամուլ» (Հնչակեան) և «Եփրատ» (Ռամկավար) թերթերը լոյս տեսան Կիլիկեան ներգաղթը տեղի ունենալէն վերջ:

Վերապրումի շրջանին բնագործեցան հայկական կամ օտար կեանքէ քաղուած բիւշներ, սարքուեցան նորահաս սերունդը գէպի լաւագոյնին առաջնորդող լսարաններ, դաստիարակութիւններ, վիճարանական ժողովներ և ըն.

Հ Ա Մ Ե Ր Պ

Ինչպէս որ րսինքս Հալէպարնակ հայ վերապրողներուն մէջ կը գտնուէին մօտիկ տնցետի թանկագին սերունդին պատկանող զսհար մնացորդներ, տսոնցմէ մին էր հայ ժողովուրդի տաղանդաւոր ու տնդուգական երգիչ Կոմիտաս Վարդապետին աշակերտը եղող Բարսեղ Կանաչեան: Հայ արուեստին սիրահար խումբ մը երիտասարդներ ու երիտասարդուհիներ Ազգային Իշխանութեանց հաւանութեամբն ու աջակցութեամբս կազմակերպեցին մեծ համերգ մը: Այս համերգը տեղի ունեցաւ օրուան մեծ թագաւոր ու հայ ժողովուրդի իսկական բարեկամ՝ Վահագն Էմիր Ֆէյսաւի նախագահութեան տակ, զկառարութեամբ վերսոյնիս մեր տաղանդաւոր արուեստագէտին: Վերջին քառօրդ զարու ընթացքին յաջորդաբար տեղի ունեցող մեր ազգային կուլտուրական ձեռնարկներուն մէջ, արուեստագիտական շարժառիթներով ցուցադրուած բոլոր կարգի շինիչ հանդիսութիւնները երբէ՛ք ալ չկրցին գերազանցել հայկական այն առաջին մեծ համերգը, որը տեղի ունեցաւ Հալէպի մէջ նախորդ աշխարհուեր մեծ պատերազմէն յետոյ, եւ ուրտեղ առաջին տնգամ ըլլալով վերապրող հայ երիտասարդութիւնը ու մեր զեղանի ազջիկները լսեցին հայ մեծանուն վարպետին — Կոմիտաս Վարդապետին տննման «Սօնա եւր»։ Այս երգը հիացում պատճառեց միտնգամայն ներկայ օտար արուեստասէր հանդիտականներուն:

Ա Շ Խ Ա Տ Ա Ն Ք Ի Տ Ո Ւ Ն

Մեր այս հարեւանցի յուշերը անկատար գործ մը նկատուած պիտի ըլլար, եթէ մոռացութեան տայինք այն աննման ու օգտակար ձեռնարկը, որ մով՝ հարիւրաւոր հայ ընտանիքներ ապրուստի ծանր մտահոգութենէն զերծ պահուեցան։ Աշխատանքի Տուն կոչուած հաստատութիւնը ձեռնարկն էր հայ քաղաքի ԱՆԴՐԱՆԻԿ կազմակերպութեան։ Աշխատանքի Տունը հաստատուած էր մասնաւոր գրասենեակ մը իր մնայուն քարտուղարով և վարչական խորհուրդով օժտուած քաղաքին հայաշատ մէկ կեդրոնը։ այս գրասենեակը ամէն օր կ'արձանագրէր հարիւրաւոր գործադուրկներ, որոնց շարքին արհեստաւորներ, հողագործներ, պարտիզպաններ կամ երկրագործներ։ Շնորհիւ յիշեալ գրասենեակին էր որ բրիտ. զին. իշխանութեանց մօտ գործի լծուեցան ութ հարիւրի մօտ աշխատաւորներ, անգլիական զինուորական իշխանութիւնը պաշտօնական կապ հաստատեց Աշխատանքի Տունին հետ և ի հարկին զինուորականութիւնը իրեն պէտք եղած գործաւորները կ'ապահովէր միմիայն Աշխատանքի Տունին միջոցաւ։ Այսպէսով՝ Աշխատանքի Տուն կոչուած այս ազգօգուտ հաստատութիւնը նախախնամական զեր մը կառարեց վերապրող հայ գործաւոր զստակարգին համար այդ շրջանին։

Փաստացի իրողութիւն մըն է, որ ժողովրդավար — բնկերվարական սկզբունքներով առաջնորդուած ազգ մը՝ որպիսին Հայ Ազգը, իր մէջ կը խը-

տացնէ գործաւորներու, աշխատաւոր քաղաւկներու ջախջախիչ տոկոս մը, պէտք ունի դասակարգային դրութեանց բարելաւմանը, և այն մեծամասնութիւն կազմող դասակարգը, որուն միայն իրաւունք արքունած է խօսելու ու գործելու իր ազգին անունովը, անշուշտ այդ դասակարգի տնտեսական վիճակը անհրաժեշտ է լաւագոյն պայմաններով օժտել. այս կարգի գործ մը կարելի է առաջացնել միմիայն կազմակերպչական լուրջ աշխատանքներով ու գործունէութեամբ: Այս իսկ խորհրդածութեամբ Աշխատանքի Տուն կոչուած հաստատութիւնը կը դառնար ազգօգուտ ու ազգամոտէր՝ միտնդամայն խիստ գնահատելի ձեռնարկ մը:

Ն Ե Ր Գ Ա Ղ Թ

Մեր յաւաքութեանց սկզբնաւորութեանը նըշանագրած էինք Միջ—Գաւառային Միութեան մը կազմութիւնը, շեշտած էինք նաեւ թէ՛ փրանսական լիազօր պատուիրակ Գնդապետ Կլուսթարը, որ արտօնուած էր վարելու վերապրող հայերուն ներգաղթին գործը, յարգելի զնդապետը խնդրած էր Միջ—Գաւառային Միութեան վարչութիւնէն որպէսզի ընդհանուր հայ վերապրողներու լիակատար մէկ անուանացանկը պատրաստուի, յարակից մանրամասնութիւններով: Վարչութիւնը այդ իսկ պատճառաւ նշանակեց միայուն գրագիր մը և կօչ ըրաւ Հալէպ պրնակ տարագիր հայութեան գիմել ու արձանագրուիլ Միջ—Գաւառայինի գրասենեակը, իւրաքանչիւր վերապրող գիւրութեամբ ու Ազգերու Դաշնակցու-

թեան ծախքովը կարենալ մեկնելու համար իր ծննդավայրը: Այս գործը նիւթա—բարոյական խիստ ծանր զոհարերութեան կը կարօտէր սակայն միութեան վարչութեան համար զոհողութիւնը հանդէպ իր արհեստիցներուն իբրեւ գլխաւոր նշանաբան ըլլալով, առատամտեմի ոչ մէկ նշույլ, ընկրկումի ոչ մէկ փորձ չառնուեցաւ վարչութեան անդամներուն մօտ: Բազմահազար հայ տարագիրներ ամէն օր կը գիմէին Միջ—Պաւստային Միութեան գրասենեակը ու կ'արձանագրուէին օր առաջ կարենալ մեկնելու համար զէպի ծննդավայր, ուրկէ վճարուած էին ԱՆԻՐԱՆԱՅԱՐ:

Գնդապետ Կլուսքար հիացումով կը զիտէր յիշեալ միութեան անդամներուն կողմէ թափուած ազգանուէր ջանքերը, և արդէն շատ չանցած մի քանի շաբաթուան ընթացքին մէջ իրենց ծննդավայրը մեկնիլ ուզող բոլոր վերադարձները անխափր զըրեթէ արձանագրուած էին: Ամէն օր առաւօտեան չոգեկառքով զէպի Կիլիկիա ճանապարհ կը դրուէին մի քանի հարիւր տարագիր ընտանիքներ, չոգեկառքի կայարանը ամէն օր արեւածագէն առաջ ներկայ կ'ըլլային Միջ—Պաւստային Միութեան կողմէ նշանակուած լիազօր երկու ներկայացուցիչներ, որոնք սիրելի գնդապետին հետ միասնաբար գործը կը վարէին հիանալի կարգապահութեամբ մը: Շոգեկառքը ճամբայ կ'ըլլէր Քաթմայի վրայով զէպի Ասանայ Տարսոն ու Մերսին, և ապա՝ շարունակելով իր ճամբան՝ այլ գծով մը, բեռնաւորուած դարձեալ հայ տարագիրներով, արագընթաց կը մեկնէր զէպի Գօնիայ, ուրկէ տարագիրներէն մաս մը կը մեկնէր

Պալիս և արուարձանները: Իսկ կրկին ամէն օր կէս օրէ վերջ մասնաւոր կտաքերով բազմահազար վերապրողներ կը մեկնէին զէպի Քիլիսոյ Այնթապ, Մարաշ, Էլպիսթան, Զէյթուն և շրջակայ գիւղերը:

Այսպէսով ինչպէս որ անսանձ ֆրանսացի մեծանուն գնդապետը ներգաղթի գործը վստահած էր միմիայն Միջ—Գաւառային Հայ Միութեան և այս ուղղութեամբ ալ յաճախ արտայայտուած էր ազգային տարրեր անուններու տակ գործող մարմիններուն, խոստովանելով թէ՛ Հալէպաբնակ Հայութեան միակ իրաւասու մարմինը պէտք է նկատուի յիշեալ միութիւնը: (*)

Յ Ո Ւ Ս Ա Խ Ա Բ Ո Ւ Թ Ւ Ի Ն

Երբ՝ հայկական ողջ աշխարհը սուգը պատած էր, երբ՝ Մայր Հայաստան հոնգուր հոնգուր կուլար իր մէկ միլիոնէ աւելի զոհերը, երբ՝ միանգամայն վերապրող պատանիներն ու երիտասարդները, հրեշտակասիրտ հայ կոյսերը իրենց սգաւորի տարազներուն մէջ աչքերնին զէպի Արարտայ Մասիս կամ Արագած ուղղած աղերսական նայուածքով մը յաւատառ ու լռատառ ասող մը կ'որոշնէին, և նոյն իսկ Հայոց երկնակամարին վրայ գանուող արեւն

(*) Միջ—Գաւառային Միութեան մասին աւելի մանրամասնօրէն զաղափարուելու համար տեսնել Կ. Գաբրիէլեանի «Եղեռնապատում» անուն աշխատասիրութիւնը:

անգամ խաւարած էր կարծես՝ սուգ մը ևս աւելցնելով արդէն իսկ սգաւոր ու դաշկացած սրտերուն վրայ՝ երբ՝ մէկ խօսքով՝ սփիւռքի վերապրող Հայութիւնը նոր օր՝ նոր արեւ կը փնտռէր՝ ցեղին նոր կենսունակութիւն մը՝ աւելի ուժեղ կամք մը պարգեւելու արդար ցանկութեամբ՝ յանկարծ դարաւոր թշնամիին սեւ մտաւ անգամ մը ևս մխրճուեցաւ հայ վիրաւոր սրտերէն ներս...

Հարէպի առաւօտները բոլոր եղանակներուն մէջ անսպասառային քաղցրիկ զովութիւն մը կը բուրնէ։ Արարիտյ այս պատմական մեծ քաղաքը դարեր շարունակ ինչպէս որ կը վիպեն պատմադիրներէն շատերը՝ իր մէջ հիւրընկալած է բազմապիսի ազգեր ու ցեղեր, և բոլորին վրայ հաւասարապէս դուրգուրացած է իբրեւ իրը։ Հայերս Մեծն Տիգրանի շրջանէն սկսած նամանաւանդ յիշեալ քաղաքի հետ ունեցած ենք հազեկան սրտէ կապակցութիւն մը ու այս քաղաքը նկատած ենք մեզի համար հանգստեան կայան՝ անհնելով որ նամանաւանդ արար ցեղը երբայրական անկեղծ կեցութեամբ մը ցուցադրած է մեզ հանդէպ ու մենք ջանացած ենք իզին ամէն զոհութեան արար ցեղին հետ միալ սիրոյ անհաւատարի ու նախանձելի կապակցութեամբ մը՝ ջանացած ենք մեր բոլոր սեփովը բարգաւաճեցնել մեզ հիւրընկալող բովանդակ Արարիտն՝ որովհետեւ նկատած ենք՝ որ արարական աշխարհի հետ հայ ժողովուրդին կապակցութիւնը ինչպէս անցեալին մէջ նոյնպէս և ապագային պիտի մնայ անխախտ՝ աշխարհի համոզութեամբ չէինք կրնար անշուշտ ապաստանէր ու անկախատէր արար ժողովուրդին ինքնավար դաւնալու անաղարտ

ողգիին ու արգար ցանկութեանը հետ հաղորդակ չըլլալ։

Ըսինք թէ՛ Հալէպի առաւօտները քաղցրիկ զովութեամբ մը կը պարուրեն քնակչութիւնը, բայց ուրբաթեան ախուր առաւօտ մը՝ կը կրկնենք— դարաւոր թշնամիին սև թաթը ճնշեց հայ վերապրողներու արգէն իսկ ճնշուած դանկերը . . . ամենուրեք ահ ու սարսափ, ամէն տեղ ահ ու դող, նոր ջարդի մը քարշահոտ թոյրով օծուած առաւօտ մը, բազմահազար տարագիր մեր փղովուրդը մասնեց իսկական խուճապի և յուսախտութեան, Հոս Հալիտի մանրամասնենք եղած ախուր պատահարը, գիտնալով որ այդ պատահարին տուն առող պարագաները իր բովանդակ մանրամասնութեամբ ծանօթ են հայ հասարակութեան, բայց, հոս կը շեշտենք միմիայն այն ախուր ու ցաւալի իրողութիւնը, որ ազատարար ու փրկարար բանակ մը միայն կրցաւ իր հանդարտիկ նախաճաշէն վերջ շատ ՈԽՇ օգնութեան փութալ ու շատ մը հոգիներ ազատել լսելջ վտանգներէն և ստոյգ մահուանէ։

Հալէպի Դիլէլ փողոցի երկայնքին վրայ կը դանուէր հայոց զերեզմանատունը... հսկայ քաղաքը խոր լուսթեան մէջ էր, փողոցները պահակախումբեր կամ պահակներ կը հսկէին... անդլիական զինուած ուժեր պաշարած էին քաղաքին գլխաւոր թաղամասերը, ուրկէ կրնար նորանոր վտանգներ յառաջ գալ։ Ահաւասիկ թաղման յանձնախումբի մի քանի անդամներ իրենց հետ ունենալով քահանայ հայր մը կը փութան դէպի հայոց զերեզմանատուն—

ներչ առաջնորդութեամբ՝ կաշատուր էֆ. անուան վազ-
ղեմի հայ Քօմիտէի մը: Մի քանի գերեզմանափոր-
ներ յանձնախումբի անդամներուն ցոյց կուտան նոր
փորուած այն ահաւոր փոսը ուրանդ պիտի տմար-
ուէին 44 նոր զոհեր... չառ չանցած, քահանայ հօր
զաւկացած աւ զոզոսչուն չրթները թաղման տխրող-
դու աղօթքը արտասանեցին, պահպանիչի գրեթէ
անլսելի վերջաբանով մը... ու փոսը գոցուեցաւ:

Ուրեմն յարգելի ընթերցող, մի մեղադրեր
մեզ երբ չենք փորձուիր մանրամասն կերպով նկա-
րագրել այս սղերդութիւնը:

ՎԱՐՁԱՏՐՈՂԱԳԻՐ ՎԿԱՅԱԿԱՆ ՄԻ

Մեր սոյն համոռօտ—ամփոփ յուշերու առա-
ջին մասը վերջացնելէ առաջ, կուզենք շեշտել պա-
րագայ մը, որը պիտի հետաքրքրէր նորահաս ներ-
կայ սերունդը զուցէ: Հայ ժողովուրդի մէջ տիրող
սխալ ըմբռնում մը չառ անդամներ պատճառ եղած
է, որ մեր լուսաւոյն ու երիտասարդ ուժերէն ազ-
գովին չկարենանք օգտուիլ, այդ ըմբռնումը կը
շեշտուի այն պարագայով՝ թէ մեր ազգը իրեն հա-
մար աշխատող, ի հարկին իրեն համար զոհուող կամ
նուիրուող ուժերը վարձատրելու գործին մէջ կը թե-
րանայ: Թէ հայ ազգային գործիչներ ոչ միայն ի-
րենց ազգին հանդէպ մատուցած ծառայութիւննե-
րուն համար չեն վարձատրուիր, այլ նոյն իսկ այդ
օրինակ ազգային գործիչներէն շատերը երբ ժամա-
նակի ու պարագաներու բերումով կը հեռանան ազ-

գային տապարէզէն, անոնք մտացութեան անդունդը կը նետուին:

Այս ըմբռնումը հիմնովին սխալ է: Արդարեւ չենք կրնար երեւակայել երբեւիցէ տանն օրեւէ ազգին գործիչ մը որ յետին միասումով կամ տպագային վարձատրուելու որոշ ակնկալութիւններով ծառայած ըլլայ իր ազգին: Հայ ազգը քաղաքականապէս ու անաստապէս բաղձապիտի հալածանքներու ու խոչտանքումներու ենթարկուած է և միշտ ալ շնորհիւ իր հաւազաս զաւակներուն կրցած է յաղթահարել բոլոր կարգի խոչընդոտութեանց, ամէն տեսակ դժուարութեանց: Եթէ ճշմարիտ հայորդիներ չուղէին գուրգուրալ ի հարկին իրենց ազգին վրայ, այդ պարագային հաւանաբար հայ ժողովուրդի վախճանը շատ գէշ պիտի ըլլար:

Այս մի քանի տողնոց խորհրդածութիւնը ըրինք) մեր յաջողութեանց կարգին, պարզապէս ցոյց տալու համար ներկայ նորահաս սերունդին, որ իրենք արժանաւոր յաջորդները պէտք է դառնան մեծ ու պատմական անցեալ ունեցող հայ ցեղին: Ճիշդ այս պատճառաւ ալ, լաւագոյնս նկատեցինք և չափազանց անկեղծ պարզմտութեամբ ու առանց ինքնահաւասն կամ ինքնազով կեցումքի: ՄԻՄԻԱՅՆ, մեր ազգը ի հարկին իր հաւազասները վաճառելու պարսկանութեան մեջ քերացող մը չըլլալը տպացուցանելու արդարաւսութեամբ, փոխանակ գործցին մէջ պահելով փճացնելու — ինչպէս սովոր են ընելու ազգային գործիչներէն շատերը, ստորեւ հրատարակու-

Թեան կուտանք վարձատրողադիր — վկայական մը
քնագրէն նոյնութեամբ ընդօրինակուած և որը ստա-
ցած ենք Հալէպէն վերջնական մեր բաժանումին տ-
ռիթովը) քաղմութիւ վարձատրողադիրներու կար-
գին:

Հալիպ 12 Յունիս 1920

Վ. Կ Ա Յ Ա Գ Ի Ր

Բնիկ Տիգրանակերտցի Արժանայարգ Տիար Միհ-
րան Նանարեան Միջ—Դաւառային Միութեան կազ-
մութեան հիմնադիր անդամներէն եւ կարեւոր սիւնե-
րէն մին, մեկ ու կես տարիէ ի վեր անընդհատաբար ե-
ղած է միութեան վարչ. ժողովոյ անդամ եւ գանձա-
պահ, իր եռանդուն գործունեութեամբ անգնահատելի
ծառայութիւններ մատուցած է տարազին Հայութեան
նիւթական, բարոյական եւ քաղաքական շահերու տե-
սակէսէն, իր ուղղամտութիւնը, պարկեշտութիւնը եւ
նուիրումն ոգին սուրբ դրուատիւններէ վեր կը մնան:

Մասնաւորապէս ներգաղթի գործին մէջ, զոր
միութիւնս վարեց Ֆրանս. ներգաղթի պաշտօնութեան
հետ, իր ունեցած աշխատութիւնները, եւ նիւթական
ու բարոյական գոհողութիւնները մեծ եղած են: Միութեան
կողմէ իբրեւ լննիչ Կիլիկիա երթալով, հոն
գաղթականաց կացութեան եւ վիճակի բարելաւումն
մասին իր աշխատութիւնները իսպառ դրած է:

Տեղեւ մեկնելու առթիւ երբ իր հրաժարականը
կուտայ, միութիւնս խորապէս կը ցաւի իր կարեւոր

ԼԻԲԱՆԱՆ ԵՒ ԿԻԼԻԿԻԱ

Բ. Մ Ա Ս

Հրամեցի նամբուն վրայ, Պէյրուք համայնայինն
բաղոմ, Ազգայիններ եւ ազգային կազմակերպութիւն
ներ, Քաղաքական գործունէութիւն, Դեպի Ալեքսանտրէք
եւ ապա Տէորք—Յօլ:

Աքսորանքի տնտեսութեան խորքէն ստանդակեցու-
ցիչ երէկուտն տեսարաններն ու դարաւոր թշնամիին
դադանային վայրագութիւնները և շարժանկարի
նման — կարծել թէ երազ մը բլլար — մեր աչքերուն
առջեւէն արագահաս ջուրի մը նման անցնող խա-
րուսիկ խրախճանքներն ու յոյսերը իտեա ձգելով
հրամեշտ կուտամ Արարիւն քաղցրիկ ու պատմական
այս մեծ քաղաքին, Հալէպէն և յուլիսեան առաւօտ
մը կը փութամ կայարանը շոգեկառք տանելու և
Մեծն Նարոլէսնի հիացումին արժանացած դէպի
քաղցրատեսիլ Լիբանան մեկնելու նպատակաւ: Կա-
յարանին մէջ կը տեսնեմ վերապրող բազմաթիւ հայ
ընտանիքներ, որոնք տնտեսաւ ինծի նման յուսա-
խոր եկած են մեկնելու համար հեռաւոր ափերը,
կամ հիւսիսային և կամ հարաւային Ամերիկաները:
Շոգեկառքին մէջ եմ, հրաշքով ազատագրուած գե-
ղատեսիլ հայ ազգական մը խօսուեն աչքերը ուշադրու-
թիւնս կը դրուեն, կը հետաքրքրուիմ իրմով և

մէկ անդամէն զրկուելուն համար: Իբր զոյգն ստեղծեալ իր մասուցած Թանկագին ծառայութիւններուն, միութիւնս ներկայ վկայագիրս յանձնելով իրեն կը յանձնաւարե նոյն ասեմ զինքն Ազգ. մարմիններու, ուր որ ալ ըլլան, օգտուի՝ Ազգին ծառայելու իր բարի տրամադրութիւններէն:

Յաջողութիւն եւ բարի հանապարհ մեր պատուական ընկերոջ:

Ի դիմաց Միջ—Գաւառային Հայ Միութ. Վարչ.

Ասեմագալիւր

Ասեմապետ

Ն. ԳԱՍՊԱՐԵԱՆ

Ս. ՍԵԼԵԱՆ

Յ Ա Ի Ե Լ Ո Ի Ա Մ

Ա. Մ Ա Ս Ի

Հալէպէն վերջին հրամանատար մը տալէ առաջ, պէտք է խոստովանիլ թէ՛ այս քաղաքը մեր մէջ կը մարմնաւորէ տխուր ու լու օրերու անվերջ յիշատակներ: Տարագրական շրջանին այս սիրելի քաղաքէն անցան հայ տիտաններէն ու մեծ մատուցականներէն կորուստ տեսողներ ու խմբակներ: Ան օրերուն մէջ էր՝ երբ դէպի սպանդանոց առաջնորդուելու համար տակէ անցան Տօքթ. Տաղաւարեան, Ռուբէն Զարդարեան, Սիւրբանիմ և Ակնունիի պէս հանճարեղ ու թանկագին հայ մտքեր: Եւ տակէ անցան մի-

անդամայն՝ Թուրքիոյ իրաւաբանական սխեմերէն և հայ կառկոտուն զէմքերէն Գրիգոր Զոհրապ և մեծ յեղափոխական Վարդգէսը. այս քաղաքէն անցան նաև Հայոց տարագիր Պատրիարք Զաւէն Սրբազնաշուին Արքեպիսկոպոսը:

Այդ սև օրերուն մէջ Հալէպի հայ քաղաքական կազմակերպութեանց անձնուէր մտաւորականութիւնը իմոյի ունենալով իր ցեղին տհաւոր կացութիւնը, չմոռցաւ կամ չթերացաւ խնամքով պատրաստուած տասներ ինը մեծադիր էջնոց տեղեկագիրներ մատուցանել քաղաքի օտար հիւպատոսներուն և կամ դիւանագիտական ներկայացուցիչներուն, որոնցմէ մէկ բացառութեամբ՝ բոլորն ալ իրենց ստացած յիշեալ տեղեկագիրները յանձնեցին տեղւոյն կուսակալութեան քաղաքական դիւանին. այդ մէկ բացառութիւնը կը կազմէր Ամերիկեան Հիւպատոսարանը, յանձին՝ Մր. Ճէքսինի: Այս պատուական մարդը միտկը եղաւ, որ իր ստացած տեղեկագիրը նոյնութեամբ փոխանցեց Ամերիկեան կառավարութեան:

Դարձեալ այս քաղաքին մէջ էր, որ հայ անդամայնի կազմակերպութեան մը հերոս երիտասարդները ծրագրեցին քաղաքին կարեւոր մէկ պանդոկը օդը հանել այն պարագային՝ երբ ստուգուած էր էնիվէր և Ճէմալներուն անուկնկալ մէկ մամանուած և իրենց իբրև իջեալ յիշեալ պանդոկը ընտրած ըլլալը. . . սակայն այս փորձը անկատար մնաց պարզապէս այն պատճառաւ, որ ակնարկուած երկու մեծ

կ'ստուգեմ որչ Երեստախոյ երբեմնի շէն քաղաքէն մեծահարուստ ու ազնիւ ընտանիքի մը զուստըն է և զածն աքսորի ճամբուն վրայ կորսնցնելով իր ունեցած բոլոր պարագաները արցունքոտ աչքերով ու բարակուն սրտով կը խնդրէ որ այդ սե օրերու պատմութեան վերջակէտ մը զնենք. մօտս նստած հազիւ քառասունը անց՝ բայց ծերացած դիմագծով և նիհարակազմ Զգուտ ու երկարադէմ մարդ մը ինծի կը խօսի իր վրէժխնդրական զգացումներուն մասին. ան կ'երգնու իր կորսնցուցած երեք զաւակներուն զլուխին վրայ որ ուշ կամ կանուխ և Աստուծոյ օգնութեամբը իր վրէժը պիտի կտրենայ լուծել թշնամիէն և երբորդ մը պառաւառցած դիմագծով կաշի ու սկիոր կառուցւածքով աքսորուհի մը իր մօտին խօսելով կը պատմէ թէ՝ Ջնքուշի գիւղէն աքսորուած ժամանակ 14 հոգիով ու բաւորն ու իրարու մօտաւոր ազգականներ ձեռք ձեռքի տուած և տարագրի ցուպը ի ձեռին և կ'ստուգեն իրարու շարունակ լեռներ ու ձորեր թափառելէ յետոյ խօսելով անանկով կրցած են եփրատ գետին եզերքը ապաստանիլ ու 14 տարագիրներէն 12ը ինքզինքնին գետը նետելով վերջ կուտան իրենց քաղցրիկ կեանքին և ինքը և իր փոքրիկ քոյրը հրաշքով ազատուած և ճարապլուտի շոգեկառքի կայարանի պաշտօնեաներէն մէկուն բարի աջակցութեամբը կը փոխադրուին Հալէպ և ապա՝ կ'ստուգեն թէ՝ իրենց մօտաւոր պարագաներէն սմանք սրտնք նախապատերազմեան շրջանին մեկնած են եզեր գէպի հիւսիսային Ամերիկա ողջ են և

այդ ազգականներուն կողմէ իրենց ընծայուած նիւթական աջակցութեամբը այժմ կը մեկնին զէպի Քօլօմպօսի երկիրը:

Վերոյիշեալ տեսարաններէն միտքս ու հոգիս յոգնած ու փոթորկած հազիւ կ'զգամ թէ մեր շոգեկառքը Բայաքի կայարանը կանգ առած ըլլալով Լիւթանի վտիտ օդ մը կը զովացնէ աչքերս: Կը շարունակենք մեր ճամբան ու երբ շոգեկառքը Մատլլաքա կոչուած կայանը կը հասնի՝ որուն անմիջական կռնակը կը գտնուի Զահլէ կոչուած երկու բարձրաբերձ լեռներուն կողին վրայ բազմաթիւ տնակներէ կազմուած ու խիստ զով և քաղցրահամ օդով մը օժտուած գիւղաքաղաքը՝ և ուրանդ պատերազմի ընթացքին ապաստան դասած էին բազմաթիւ փախըստական հայ մտաւորականներ, ինքնամտածումի պահ մը կ'անցնեմ և մեկուսի կ'ոկիսիմ խորհրդածել ոչխորհի մէջ դոյուլիւն ունեցող անիրաւութեանց տխուր հետեւանքներու մասին. բայց շոգեկառքը կը շարունակէ իր ճամբան, շատ չանցած անյոյս ու անուպաւէն հայ ճամբորդներս կը հասնինք Լիւթանի ամենաօգտաւոր ու հարուստներուն քաակին միայն մատչելի եզրը Սօֆար կոչուած օգափոխութեան վայրը. շոգեկառքը ըստ իր սովորութեան, այս կայարանին մէջ ևս կանգ առնելէ յետոյ՝ բարակ ձայնով մը ճչացող իր սուլիչը քալելու ազդանշանը կուտայ. ճամբու ընթացքին շոգեկառքի պատահաններէն մերթ քմերթ դուրս կը ցցենք մեր զլուխները կտրենալ գիտելու ու վայելելու հա-

մար Լիբանանի սքանչազարծ տեսարաններն ու հե-
ռաւոր գիւղերը և գիւղակները, որոնք՝ մէկը միւ-
սէն տւելի հեռաքրքրութիւն կ'ստեղծեն զիրենք զի-
տող մեր աչքերուն մէջ, Խսկապէս՝ Լիբանան կոյս
մըն է եւ զայն պէտք չէ պղծել։ Մեր շողեկառքը
կ'անցնի Լիբանանի շատ մը բարձրահայեաց լեռնե-
րէն ու յանկարծ սուլիչի եզանակաւորում մը մեզ
կ'իմացնէ նոր կայարան մը հասած ըլլալնիս։ Այս
տեղ, ամառուան կիզիչ եղանակին, Մերձաւոր Արե-
ւելքի հեռաւոր կամ մօտաւոր շրջաններէն բազ-
մաթիւ քնտանիքներ կուգան իրենց այդ տաք եղա-
նակը տւելի զովացուցիչ, տւելի անդաժառ օդային
մթնոլորտին մէջ անցնելու համար։ Բնութեան պար-
գեւած այս գեղեցկութիւնները առանձնաշնորհումը
եղած է միակ հարստահարիչ և կեղեքող դասակարգի
մը, որոնք կ'ապրին չակերտաւոր վայելքի ու մըս-
խումի արբեցողութեան ազդեցութեանը տակ, Բնիկ
ստորերուն կողմէ Պհամաուն անտառուած այս կա-
յարանէն ալ կը հեռանանք դառնադառնութեամբ մի-
այն։ Մեր ճամբարդատար շողեկառքը հեղհեղեղ
կ'սկսի դէպի վար սահիլ դանդաղաշարժ գնացքով
մը, և երբ վերապրող ճամբարդներս կը պատրաստ-
ուէինք մեր երէկուան ու չափազանց մօտիկ անցեա-
լի յուշերը պրպակ — հակառակ մեր կամքին — տ-
հաւաստիկ սուլիչի երկարաշունչ ձայն մը ևս ու մենք
կ'զգանք թէ՛ տարրեր նոր կայարան մը հասած ենք։
Այս տեղ կը կոչուի Ալէյ, վերապրող ճամբարդնե-
րուս հետ կը գտնուէին մի քանի Պէյրութցիներ, ո-
րոնք մեզ կը նկարագրեն Ալէյի ամառնային եղա-

նակին մէջ տնցուցած հռուզալիր կեանքն ու ապ-
րումները. Եգիպտոսէն օգտւիտթեան համար ամէն
տարի Ալէյ եկողներուն թիւը հեազհետէ բազմանալու
նշաններ ցոյց կուտայ եղեր, և Ալէյ եկող օտարները
իրենց համար գլխաւոր զբօսանք կ'ընտրէին բազդա-
խաղը. այս ցաւալի իրողութենէն կը գտնուատէին
մեզի ընկերացող Պէյրութցիները. այս կայարանին
մէջ բազդատամբ ուրիշ կայարաններուն չսգեկառ-
քը առաւ վայրկեան աւելի ժամաւաճառ կ'ըլլայ, և
վերջապէս չսգեկառքին սուլիչը ճամբորդները կար-
գապահութեան կը հրաւիրէ, սրտնցմէ ամանք հան-
գըտի համար կամ զով ջուր մը ըմպելու ասորժա-
կով ցրուած էին կայարանին զանազան մասերուն
մէջ. Ալէյէն գէպի Պէյրութ երկարող գիծը շատ եր-
կար չէ և Ալէյին ու Պէյրութին միջև կը գտնուին
մի քանի աննշան՝ բայց կրկին գեղեցիկ տեսարան-
ներով, անտառներով ու ծառատառաններով օժտուած
մեծ ու փոքր կայարանները, և երբ եր-
կարաչունչ ու չափազանց սուր կերպով ճչացող սու-
լիչ մը մեղմօրէն կ'ահաղանդէ, երեկոյեան ուշ ա-
տեն մենք զմեզ կը գտնենք Մերձաւոր Արեւելքի
Մայրաքաղաքը նկատուող Պէյրութի կայարանը:

ՊԵՏՐՈՒԹ ԶԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՔԱՂԱՔ

Փիւնիկեան այս ծովահայկաց քաղաքը, որ թի-
րակզղի մը գեղեցկակերտ տեսարանը կը ներկա-
յացնէ, իր մէջ կը բովանդակէ զանազան ազգեր ու
ցեղեր, իրարմէ տարբեր դաւանանքի պատկանող
հասանքներ, սրտնց բոլորն ալ վաղուց ի վեր եկած ու

հաստատուած են այս քաղաքին մէջ Պէյրուսթի բնակ-
չութեան գլխաւոր տոկոսը կը կազմեն Մարտիրոսեան-
բնիկները և ապա՝ Յոյն Օրթոտքոսներն ու իսլամ կրօն-
քին գաւանդող զանազան ազգեր ու ազանդներ։ Հա-
յերս ամբ Կիլիկիան իշխանութեան տապալուածէն
վերջ ցանցառ թիւով եկած ենք այս վաճառաշահ
նաւահանգիստը և ապրուստի որոնումի արդար այս-
տով միայն հաստատուած ենք հաս :

Պէյրուսթ որպէս միջ—ցեղային խմբաւորում-
ներու կեդրոն քաղաք մը եղած ըլլալով նկատուած
է՝ իբրև համայնքային քաղաք և իւրաքանչիւր հա-
մայնք ունենալով իր տաննաւորն եկեղեցին ու կրթա-
կան հաստատութիւնները և ազատ ու անկաշկանդ կը
գործեն պահելով իրենց ազգային գիմաղիծն ու սո-
վորութիւնները և այս պարագան՝ ազգերու եզրայ-
րակցութեան ծափահարելի բնթացք մը կրնայ նկատ-
ուիլ։ Իւրաքանչիւր համայնք ունի իր ազգային
ուրոյն նկարագիրը ու ինքն իր մէջ ստեղծած է
վարչական ձեւաւորումներ կամ մեքենականութիւն,
որոնցմով կը կառավարուին իրեն ազգին ու ցեղին
պատկանող հաստատութիւնները :

Ծովահայկաց ու վաճառաշահ այս քաղաքին մէջ
գոյութիւն ունին կրթական բարձր ու միջնակարգ
հաստատութիւններ։ Պէյրուսթի գոյգ համալսարաննե-
րը իրենց հիմնարկութենէն ի վեր ունեցած են
տարբեր ցեղերու, տարբեր ազգութիւններու պատ-
կանող ուսանողներ և ուսանողուհիներ։ այս պարա-
գան եւս կը փաստէ քաղաքին համայնքային գրու-
թիւնը։ Պէյրուսթի գոյգ համալսարանները տուած են

կտրող աւարտականներն որոնց չարքին քիչ թիւ չեն կազմեր հայ ուսանողները և Պէյրուսթի զոյգ համալսարաններէն չըջանաւարտ եղող բժիշկներն ու դեղագործները ատամնաբուծներն ու այլ կարգի արուեստագէտներն կրցած են գրաւել կեդրոնական եւրոպայի մէջ զոյուսթիւն ունեցող գիտական կամ կըրթական բարձր հաստատութեանց լսելի ունեւորութիւնը։ Այս զոյգ համալսարաններէն զտա կան նաեւ միջնակարգ արժէք ներկայացնող կըրթական կարեւոր հաստատութիւններն երկրորդական վարժարաններն որոնք իրենց մէջ կը հաշուեն բազմացեղեան նկատաւելի թիւ կազմող ուսանողութիւն մը։ Արեւելեան երկիրներէն շատ մը ուսանողներ իրենց մասնագիտութիւնը աւարտելու համար կը գիմեն Պէյրուսթի զոյգ համալսարաններուն։

Պէյրուսթ քաղաքը օժտուած է միանգամայն վաճառականական շատ մը առաւելութիւններով և ու այս երկրին բնակչութիւնը արեւմտեան ազգերէն շատերուն հիացմանը առարկան դարձած է։ Համայնքային այս երկրին մէջ հայերս ալ ունեցած ենք կարեւոր զբաղումներն իսկ զոյգ համալսարաններու սուսուցչական կազմին մէջ ունեւորու են հայ դասախօսներու առաւելութիւնները։ Այս զոյգ համալսարաններէն չըջանաւարտ եղած են մեր առաջնորդաւոր բժիշկներէն շատերը, որոնց թիւն ու որակը կարեւոր արժէք կը ներկայացնեն։

Ա Զ Պ Ա Յ Ի Ն Ն Ե Ր Ե Ի Ա Զ Պ Ա Յ Ի Ն

Կ Ա Զ Մ Ա Կ Ե Ր Պ Ո Ի Թ Ի Ի Ն Ն Ե Ր

Պէյրութ հասնելէս մէկ օր վերջ) առանց հանգիստի ու դադարի, կը հետաքրքրուիմ քաղաքի ազգային գէմքերովն ու կեանքովը: Այն տառն քաղաքը հայաշէն չէր, պատահութիւնը կուեննամ տեսակցութիւններ և սերտ յարաբերութիւններ ստեղծելու քաղաքի հին ծանօթ շատ մը ազգայիններուն հետ:

1920ին, Պէյրութի առաջնակարգ վաճառատունը կը կոչուէր Սարրաֆեան եղբայրք վաճառատուն: Սարրաֆեան ընտանիքը իրենց ծննդավայրը եղող Տիգրանակերտէն շատոնց իվեր գաղթած ու եկած հաստատուած էին: Ինչպէս որ քանիցս կրկնեցինք, այս վաճառաշահ երկրին մէջ, հաստատելով մեծ վաճառատուն մը քաղաքին հարուստ շուկաներէն ամենագլխաւորը եղող Պապ խարիս կոչուած շուկային կեդրոնը: Սարրաֆեան վաճառատունը յարաբերութեան մէջ էր եւրոպական կամ արեւմտեան երկիրներու մէջ գոյութիւն ունեցող բազմաթիւ մեծ վաճառատուններու հետ: Սարրաֆեան երեք եղբայրներ, իրենց անձնական գործին հետ առնիթեր կը շարունակէին ազգային գործերով ևս հետաքրքրուիլ և այդ ուղղութեամբ ազգագուտ ձեռնարկներ ստեղծել: Արրահամ, Պօղոս և Սամուէլ Սարրաֆեան երեք անբաժանելի եղբայրները Պէյրութահայ ազգականքին մէջ գրաւած են ուշադրաւ տեղ մը ու

մենք չենք կրնար գնահատանքի արժէք մի քանի խօսք չուզել այս ազգասէրներուն հասցէին: Սարափեան երեք եղբայրներն ալ հաւասարապէս իրենց կարելի բոլոր միջոցներովը ջանացած են Պէյրութահայ դաղթականներուն օգտակար հանդիսանալ թէ՛ նիւթապէս և թէ բարոյապէս:

Պէյրութահայութան ծանօթ ու յարգելի անձնուորութիւն մըն էր նաեւ բնիկ Ատանացի բժիշկ Պաղտատար Մելգոմեանը: Այս յարգելի բժիշկը որ դատախօսն էր միանգամայն Պէյրութի բժշկական ֆրանսական համալսարանին, հակառակ իր բազմադրադ վիճակին, չէր խուսարեր հայ դաղթականի մը կողմէ իրեն ներկայացուած պարտականութենէն, անդու ու անդադար իր արեւակիցներուն համար և իւրայիններուն օգտին աշխատող անխոնջ անձնաւորութիւն մըն էր յիշեալ բժիշկը:

Պէյրութահայ հին ազգային դէմքերէն և պետական բազմակողմանի ձիրքերով ու ըմբռնումներով օժտուած մեծ դէմք մըն էր Կիւլպէնկ փաշա կոչուած անձը: Մենք երբ Պէյրութ կը ժամանենք, մեղի կ'իմացնեն թէ՛ քաղաքի ազգ. գործերուն ղեկավարութիւնը վստահուած է աւագ ու կարող հայո՞ւ մը, որը իր Ազգ. Միութեան ատենապետի հանգամանքովը գործած էր անբասիր կերպով և միշտ ալ օգտակար հանդիսացած իր ցեղակիցներուն:

Պէյրութահայ ազգ. դէմքերու շարքին, յիշատակութեան արժանի սեղ մը կը դրուեն, այդ թուականին — մեր յուշերուն մէջ — Միսակ վեհաւնի (ղերձակ վաճառական), ծանօթ ազգային գործիչներէն Գագիկ Օղանեանի գործակից զեղագործ

կարապետ Պէրպէրեան, Արշակ Գալուստեան, Նազարէթ Կէրկէրեան և այլք։

Բարիգի ազգ. պատուիրակութեան կողմէ մասնաւոր լիազօրութեամբ այդ թուականին Պէյրութ հասած էր ծանօթ քննադատ հրապարակադիր և իրաւաբան Գուրգէն Թահմազեանը։ Յիշեալի կարգադրութեամբ նախապէս գոյութիւն ունեցող Ազգ. Միութիւնը, որը գրեթէ կազմալուծուած վիճակ մը կը ներկայացնէր, բոլորովին լուծուելով կազմուեցաւ նոր Ազգ. Միութիւն մը ներկայացուցչական գրութեամբ։ Այս նորակազմ Ազգ. Միութեան կը մասնակցէին երեք յարանուանութիւններէն և երկու քաղաքական քոյր կազմակերպութիւններէն (Հնչակեան և Դաշնակցական) երկուքական ներկայացուցիչներ, Գուրգէն Թահմազեանի կողմէ թափուած ջանքերը ապարդիւն չանցան, որովհետեւ՝ նորակազմ Ազգ. Միութեան բոլոր անդամները անխափր՝ գնահատելի համերաշխութեամբ մը գործին փարելով՝ սկսան ազգօգուտ ձեռնարկներ յառաջացնել, քաղաքական, ընկերային, կրթական ու անասնական գեանի վրայ, Այս նորակազմ Ազգ. Միութեան անդամներուն մէջ հետեւեալ ազգայինները գնահատելի ծառայութիւններ մատուցին այդ օրերուն. Բժիշկ Մելքոն Պաղտատարեան, Արշակ Գալուստեան, Վահրամ Վարժապետեան, Մկրտիչ Չաարճեան, Նազարէթ Կէրկէրեան և Բժիշկ Սալիպեան։

ՔԱՂԱՔԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՌՈՒԹԻՒՆ

Կիլիկիայէն ստացուած լուրերը մեզ նոր քոյսերով կը զինեն, կ'սգեւորուինք, եռանդնիս կ'աւելնայ կարծես, կրկին ու կրկին կը շահագրգռուինք ազգային կազմակերպչական հարցերով և վերջապէս աշխատենք Պէյրութ հասած էր նաև հին ու ծանօթ ազգ. գործիչներէն Պ. Շաւարշ Շիշմանեանը, որուն — ինչպէս որ ստուգեցինք — պաշտօն արուած էր անմիջապէս կազմակերպելու Միջ—կուսակցական Մարմին մը, կարենալ նիւթական գետնի վրայ օգնութեան փութալու համար Կիլիկիոյ մեր կռուող ուժերուն: Յիշեալը իրեն արուած պարտականութեան մէջ չի թերանար և արդէն իսկ գոյութիւն ունեցող երկու քոյր քաղաքական կազմակերպութեանց ներկայացուցիչները քով քովի գալով հիմը կը դնեն Միջ—կուսակցական Մարմնի մը կազմութեան: Այս նորակազմ Միջ—կուսակցականը յարմար կը դատէ իրեն հետ գործի լծել նաև անկուսակցական Ծ-րդ. անձ մը եւս. այդ անձը կը ներկայացնէր Պէյրութահայութեանէն շատ սիրուած ու յարգուած և անխոնջ կերպով իր ազգին համար աշխատող կղեր մը, յանձին՝ Հ. Պօղոս Վրդ. Արիսին: Այս վերջինս մեծապէս օգտակար ծառայութիւններ կը մատուցանէ յիշեալ Մարմնոյ մէջ իր անդամակցութեամբը:

Խոստովանինք թէ՛ Կիլիկիան եռուզալիւ պատմական շրջանին մէջ, այսինքն՝ հայ կամաւորական գունդերուն ֆրանսական հրամանատարու-

թեան տուաջնորդութեամբ կիլիկիոյ մուսքէն անմիջապէս վերջի Պէյրուսթահայութիւնը իբրեւ պարտազանց դուրս չեկաւ: ալ՝ շնորհիւ կողմերու բարի կամեցողութեան ու ազգային անշահախնդիր կեցուածքին եղած ձեռնարկները միշտ յաջողութեամբ կը պսակուէին: Այս կարգին էր Միջ-կուսակցական Մարմնոյ կողմութիւնն ու գործունէութիւնը: Յիշեալ Մարմինը որ կոչուած էր քաղաքական գետնի վրայ գործել ու միմիայն կիլիկեան անցողարձերով հետաքրքրուելու և իսկահանջեալ հարկին անոնց կորիքներուն գրական կերպով զօրավիգ հանդիսանալու համար կարճ ժամանակուայ ընթացքին իր ցոյց տուած բեղմնաւոր գործունէութեամբը կրցաւ լուսադոյնօրէն օգտակար հանդիսանալ կիլիկիոյ զանազան շրջաններու մէջ գործող մեր յեղափոխական ուժերուն: Հոս կը զգուշանանք մանրամասն նկարագրել կամ մի առ մի թուել այն ազգանուէր ձեռնարկները որոնք այդ շրջանին տուաջողութեան կողմակերպուած ձեւի տակ ու գրական արդիւնք տուին — ինչ որ՝ Միջ-կուսակցականի նախաձեռնութեամբ կ'ըլլար:

Դ Է Պ Ի Ա Լ Է Ք Ս Ա Ն Տ Ի Է Թ

Կարճ ժամանակուայ մը համար Պէյրուսթմուլէս և անարժանաբար ազգ. շարք մը գործերով զբաղուելէս վերջի Հ. Բ. Ը. Միութեան կիլիկիոյ շրջանի լիազօր պատուիրակ և յայտնի ու սիրուած ազգ. գործիչ Պ. Միքայէլ Նաթանեանի կողմէ ինծի

տրուած հրաւերին վրայ՝ երբ կը պատրաստուիմ Ալէքսանարէթի վրայով դէպի Տէօրթ—Եօլ մեկնիլ) Պէյրուսթի Միջ—կուսակցական Մարմինը այս պատեհութիւնը օգտագործելու անկեղծ նկատումով, մեզ կը լիազօրէ յանուն Միջ—կուսակցականի Ալէքսանարէթի մէջ կազմակերպել նման օրինակ մարմին մը ու մենք պարտադրարար մեզ առաջարկուած այս պատուարեր, միանգամայն՝ ուղղօգուտ առաքելութիւնը չենք մերժեր։ Պէյրուսթի Միջ—կուսակցական Մարմինը մեզ հետ դէպի Կիլիկիա կ'ուղարկէ նաեւ՝ կարեւոր քանակութեամբ կարգ մը դեղօրայք... ու մենք բեռնաւորուած նիւթաբարոյական ծանր պարտականութեամբ, առժամայէս հրաժեշտ կուտանք Պէյրուսթին ու շոգենաւով կը մեկնինք դէպի Ալէքսանարէթ։ Մեր այս մեկնումը տաւելի ևս կը գիւրանայ ա'յն պարագայով, որ մեզ հետ փոխադրուելիք դեղօրայքին նաւահանգիստէն անցքը դէպի շոգենաւ կ'ապահովուի ու կ'երաշխտւորուի Հայր Պօղոս Վրդ. Արիսին կողմէ։ Մէկ գիշեր տատամսոտ ու վարանոտ քուն մը կ'անցնենք շոգենաւի փոքրիկ խցիկներէն մէկուն մէջ։ Առաւօտ է, շոգենաւը կանգ կառնէ երբեմնի հայոց ծոցին ամենախորը գանուսդ և Ալէքսանարէթ կոչուած նաւահանգիստին առջև։ Շնորհիւ մեզ ընծայուած մասնաւոր աջակցութեան, շնորհիւ՝ նախապէս եղած խոհմ ու լուրջ կարգաւորութիւններուն, կը յաջողինք առանց դժուարութեան մեզ հետ ունեցած դեղօրայքով... միասին նաւահանգիստ ելլել, ուրիշ կ'առաջնորդուինք Սահակ Սահակեան անուն քաջ տղամարդու մը բնակարանը։

Ալէքսանտրէթի մէջ մեր անցուցած մի քանի օրերը կ'արդիւնաւորեն ա'յն բանով, որ մենք դիւրութեամբ կը յաջողինք կազմել Միջ—կուսակցական ենթակամիտէ մը, և ապա՝ այս ենթակամիտին միջոցաւ կարելի կ'ըլլայ մեզ հետ ունեցած դեղօրոյքը . . . փոխադրել տալ Տէօրթ—Եօլ:

Տ Ե Օ Ր Թ — Ե Օ Լ

Հայոց երբեմնի ծոցին մէջ մէկ տարուան ընթացքին այցելող շոգենաւերուն,՝ ռազմանաւերուն կամ առեւտրական նաւերուն թիւը կարեւոր քանակ մը կը կազմէ, որովհետեւ Ալէքսանտրէթը հինուց ի վեր նկատուած է վաճառականութեան միջնորդ քաղաք մը, և այս պատճառաւ ալ քաղաքին մէջ հաստատուած են բազմաթիւ ընդհանուր հիւպատոսարաններ: Ալէքսանտրէթը փաքիկ նաւահանգիստ մըն է թէև, բայց վաճառաչահ այս քաղաքը կիլիկիոյ և Սուրիոյ միջև հաղորդակցութեան միջոց մը դարձած է:

Ալէքսանտրէթի նաւահանգիստէն բազմաթիւ մեծ տուգաստանաւեր բեռնաւորուած վաճառականական նիւթերով ու ապրանքներով, շատ անգամներ մինչև իսկ կիպրոս կը ճամբորդեն: Մեր Ալէքսանտրէթ գտնուած թուականին Տէօրթ—Եօլի և Ալէքսանտրէթի միջև գործող շոգեկառքին գիծը հայ ճամբորդներու համար ապահովութիւն չէր տար: Բայց ան ու Այասն այդ շրջաններուն թուրք զինուած անպատասխանատու քաղաքացիներուն ձեռքն

էր. թէև՝ ֆրանսական ուժերը Քայտսի կայսրանի զօրանոցին մէջ կը ներկայացնէին որոշ ուժ մը, սակայն տսիկա չէր կրնար երաշխաւորել ճամբորդներուն ֆիզիքական ապահովութիւնը, որով Ալէքսանտրէթէն Տէօրթ—Եօլ հայերուն ճամբորդութիւնը տեղի կուենար առաքատաանաւերով միայն:

Երեկոյ մը ուշ տունն երկատանեակ մը հայ ճամբորդներու ընկերակցութեամբ առաքատաանաւով ճամբայ ելանք դէպի Տէօրթ—Եօլ (Չոք Մարզուան), Գիշերային խորհրդաւոր ճամբորդութենէ մը յետոյ, որը՝ ութ ժամ տեւեց, առաւօտեան լուսաբացէն վերջ կրցինք փոթորկոտ ու ալեկոծ ծովին զէմ կուռելով միայն ցամաք ելլել:

Տէօրթ—Եօլը ծովէն կէս ժամ դէպի ներս նարընջեղէնի ծառատաններով ու պարտէզներով զարդարուած գիւղաքաղաք մըն է. բնակչութեան բաւոյն տլ տնխտիր վազուց իվեր հայեր եղած են. այս գեղեցիկ գիւղաքաղաքը չրջապատուած է մի քանի թրքաքնակ գիւղերով, որոնք կը կոչուին Էօգերլի, Օնագլի, Չայլի եւ Քարա — Քիլիսէ: Տէօրթ—Եօլին ջուրը կ'ապահովուէր ԳԱՎԱԳ Թէփէ կոչուած բլուրի մը սասրսէն բլխած ակով մը:

Մեր Տէօրթ—Եօլ հասնելէն մէկ օր վերջ հաստատուեցանք Հ. Բ. Ը. Միւսթեան հիւանդանոցը: Այս հիւանդանոցը նախախնամական կարեւոր դեր մը կը կատարէր վերապրող Տէօրթ—Եօլցիներուն, Հասան—Պէյլիցիներուն, Էքպէզցիներուն և բոլոր այլ հայերուն որոնք կը դառնուէին այդ թուականին հոն: Բարեգործականին հիւանդանոցը երկյարկանի շէնք մըն էր. առաջին յարկը յատկացուած էր դարմանա-

տան, դեղարանի և խոհանոցի բաժիններուն, դարմանատունը կ'ապցելէին ամէն օր առաւօտեան կանուխէն սկսեալ մինչև կէս օր բազմաթիւ հիւանդներ, որոնք խնամքով կը քննուէին հիւանդանոցին մնացուն բժիշկին կողմէ և որոնց ի ձեռին ունեցած դեղագիրները կը պատրաստուէին հիւանդանոցին դեղարանի բաժնին մէջ ձրիաբար: Հիւանդանոցին երկրորդ յարկը տրամադրուած էր հիւանդներու և վիրաւորներու. այս երկրորդ յարկին մէջ գտնուած վեց սենեակներէն երկուքը տրամադրելի էին որդ—որուհիներուն, Բէլէկեան և Սիսուան որբանոցներէն բերւած, որոնք կը խնամուէին չափազանց մեծ հոգածութեամբ ու զուրգուբոս նաշուածքով. երրորդը նոյնպէս սենեակ մը յատկացուած էր օրուան դէպքերէն վիրաւորուածներուն համար. չորրորդ սենեակին ալ որպէս կանանց բաժին տրամադրուած էր հայ գաղթական հիւանդ կիներուն. մնացած երկու սենեակներէն մին կը գործածուէր իւրեւ հանդերձեղենաց պահատուն, իսկ միւսն ալ տրամադրուած էր հիւանդանոցի մնացուն հակիչին: Այս հիւանդանոցը մեր Տէօթթ—Եօլ հասնելէն չորս ամիս վերջ կարգ մը յարգելի պատճառներով փոխադրեցինք երեք յարկանի մեծ շէնք մը:

Հ. Բ. Ը. Միսթեան կտրեւոր և ազգապահպանման տեսակէտով խիստ օգտակար ձեռնարկ մըն էր Բէլէկեան և Սիսուան որբանոցներուն գոյութիւնը: Բէլէկեան որբանոցին մէջ կը խնամուէին և կ'ուսանէին երկու հարիւրէ ավելի անչափահաս տղաքներ, որոնց ազգային տոհմիկ դաստիարակութեան գործը յանձնուած էր կարող տեսուչի մը հետ

գործող մի քանի կարող ուսուցիչներուն իսկ Սիս-
ուան որբանոցը ունէր չարս հարիւրի մօտ որբուհի-
նէր) որոնք նմանապէս կը խնամուէին ու կը դաս-
տիարակուէին Բարեգործականի ծախքերովը: Սիս-
ուանի տեսչութիւնը կը վարէր սիրուած ազգային
Պ. Հմայեակ Գրանեան: Այս երկու կարեւոր հաս-
տատութիւններն ալ՝ Հ. Բ. Բ. Միութեան կիլիկիոյ
և Սուրիոյ լիազօր քննիչ պատուիրակ Պ. Միքայէլ
Նաթանեանի վերին հսկողութեանը ստակ կը գոր-
ծէին:

Տէօրթ—Եօլի մէջ այդ շրջանին կը հրատա-
րակուէր «Սիսուան» անուն խմբարտօպ պարբերա-
թերթ մը) որուն խմբագրութիւնը կը պատկանէր
քաղաքական որոշ հասանքի մը: Գիւղաքաղաքը ու-
նէր իր ազգային վարժարանն ու եկեղեցին: Բնակ-
չութեան գլխաւոր մասը կը գրաւէր նարինջի առու-
ծախի գործով: Ալէքսանտրէթէն մասնաւոր վաճա-
ռականներ կուգային և պարտիզպանատէրերուն հետ
համաձայնութիւն գոյացնելով կը գնէին բոլոր նա-
րինջները) որոնք մասնաւոր անտուկներու մէջ տե-
ղաւորուած ճամբու կը գրուէին գէպի Ալէքսանտ-
րէթ: Տէօրթ—Եօլ ունէր նաև փոքրիկ շուկայ մը
ուրանդ մանր առեւտուրով կ'զբաղէին շատեր. ունէր
երկու դեղարան և մի քանի ականաւոր բժիշկներ)
որոնց բոլորն ալ հոն հաւաքուած էին իրենց աշխա-
տանքը ի սպաս դնելու համար կիլիկեան շարժու-
մին:

Տէօրթ—Եօլին բնակչութեան կազմակերպչա-
կան գործը այդ թուականին վստահուած էր Բէրթէն
Խաչատուրեանին: Այս գինուարականը իր ուսումը

առած էր Ամերիկա և երկար տարիներ դորժած Ամերիկեան բանակին մէջ։ Քէրթէն կաշատուբեան կարճ ժամանակի ընթացքին կրցաւ — զսնագան հասանքներու կամ կողմերու աջակցութեամբն ու գործակցութեամբն տնչուշա — կաղմակերպել բնակչութիւնը, ստեղծելով սոսիական ամաններն ջուկատ, ժանտարմարի և հեծելազօրաց մասնաւոր գունդ մը, ըստին ալ ամերիկեան արդիականութեամբ օժտուած և ամերիկեան համադրեալներու հետեւողութեամբ Այս ըստը տեղի կունենար խիստ կարգապահութեամբ մը և բնակչութիւնը կնխակայ էր զինուորական վերին մարմնոյ մը հրահանգներուն։ Պրանտական զինուորական իշխանութիւնը երբէք չէր փորձուէր միջամտել ժողովուրդին ներքին կաղմակերպչական գործերուն, ընդհակառակը՝ մինչև կիլիկեան չարաքախտ արատագաղթը, միշտ անկողմնակալ կեցումով մը ցոյց կուտար եղած դէպքերուն հանդէպ։

Սակայն, կուսակցական չարաղէտ պայքարը ներքին անհամաձայնութիւններ և հասանքներուն միջև տիրող կասկածոտ վարմանքը երբ հետզհետէ զարգացաւ, Քէրթէն կաշատուբեան հրամարելով իր պատասխանատու պաշտօնէն՝ դորժը յանձնեց կարգ մը անպատասխանատու մարդոց, որոնք իրենց անձնական հաշիւները չկրցին աւելի բնութարձակել, շնորհիւ վրայ հասնող կիլիկեան արատագաղթին։

Տէօրթ—Եօլի մէջ այդ շրջանին արատասահմանէն այցելողներուն թիւը հետզհետէ կուեննար, որոնց ըստին ալ կու գային մասնաւոր առաքելութեամբ մը, Այս այցելուներու կարգին յիշատակու-

Թեան արժանի տղգային դէմքերէն էին յայտնի զը-
րադէտներ վահան Գիւրքեան և Արշակ Չօպանեան,
նաև երբեմնի ծանօթ ակնարոյժ բժիշկ Էնֆիլէճեան,
Հին յեղափոխականներէն ոմանք ևս յաջորդաբար
այցելեցին և դորձօն մասնակցութիւն ընծայեցին
Կիլիկեան շարժումին:

Տէօրթ—Եօլի մէջ կը գտնուէին յայտնի ու
սիրուած բժիշկներ Անդրանիկ Չափուշեան, Երուանդ
Խոթանասեան, Գարեգին Վարդապետեան և Թա-
թարեան, որոնք մեծապէս օգտակար հանդիսացան
ընակչութեան առողջապահական կարիքներուն:

Տէօրթ—Եօլի Հ. Բ. Ը. Միւթեան հիւանդա-
նոցին մնայուն բժիշկն էր Միհրան Վարպետեանը:

Մեր Տէօրթ—Եօլի հիւանդանոցին մէջ պաշ-
տօնավարած տասը տմսուան ընթացքին չմոռցանք
օրը օրին հետեւիլ Կիլիկեան իրադարձութիւններուն
և օրը օրին միտնդամայն մեր յուշատետրը բռնա-
ւորել հայկական նորանոր դէպքերով, որոնցմէ մէկ
տատերորդ մասը միայն քաղուածաբար կը ներկա-
յացնենք յարգելի ընթերցողներուն:

Կիլիկեան Ա.Բ.Թ.Ը. եթէ արտա մը պէտք է նկա-
տել հայ անուէին, արտա մըն է նաև եւրոպական մի-
քանի մեծ պետութեանց համար, որովհետև աիրող
քաղաքական ու դիւանագիտական լարախաղացու-
թիւնները և պետութեանց շահագիտական չար մի-
տումները պարտաւորեցին մեզ նահանջի դիմ մը ու-
րոնել, դէթ այդ կերպով ապահովելու Կիլիկեան աշ-
խարհի մէջ գտնուող բազմահազար հայերուն ֆիզի-
քականը: Մեծ պետութիւնները մեծամեծ խոստում-
ներով օրօրեցին մեզ, բայց անոնք կորձ ժամանակ

յետոյ խոստումնադրութ զուրա եկան:

Այս՝ կ'ընդունինք թէ կիլիկեան աքիճն չոր-
ժումները չապահովեցին մեր սղգային իզմերուն ու
բողձանքներուն իրականացումը. կը խոստովանինք
թէ՝ կիլիկեան աքիճն մէջ չունեցանք հեռաւեռ կեց-
ուածք ու պարտուեցանք: Բայց մեր այդ պարտու-
թիւնը բոլորովին սղգային զեկավարներուն ուսին
վրայ պէտք էէ ծանրաբեռնել: Քանի որ՝ դիւսնա-
գիտութիւն կոչուած հրէշային ծրագիրները խորտա-
կեցին կիլիկեան անպարտելի հայ պատնէշը: Թող
սպագայ պատմագիրներ չփորձուին մեղադրել մեզ
երբ նամանականդ՝ կիլիկեան մեր պարտութենէն ան-
միջապէս վերջ Արարատի երկնակամարին վրայ
փայլեցաւ հայոց լուսաստու ու յուսաստու մեծ աստ-
ղը....:



Պ Է Յ Ր Ո Ի Թ

Գ. Մ Ա Ս

Վերադարձ, Վերսին Դեպի Պարսականութիւն, Արսակարգ Ժողով, Վրանափառ, Կրթական Հաստատութիւններ, Հայկական Մամուլ, Մ. Ա. Ո. Ը., Հ. Բ. Ը. Մ., Յարգանքի Սգահանդես, Մարգական, Հայ Ազգի Երեսփոխաններ, Օրինակելի Համագործակցութիւն, Ապարդիւն Ժողով մը, Վախճանումներ Հոգեւոր Պետերութեւ, Սանճագ, Պաղեստինեան Կնէիւնի Չարադէս Հետեւանները, Հայրենադարձութիւն, Իբրեւ Եզրակացութիւն:

Վ Ե Ր Ա Դ Ա Ր Չ

Արեւմտեան պատուիւննց կապիտալիստական մենաշնորհը պատճառ դարձաւ մեր քաղաքական եւ ընկերային անկումին. կապիտալիզմը պարտադրեց հայ ժողովուրդը որ իր աղքատիկ ազգային կառուցուածքովը ու ինքնավարութիւններ հոշովելու խնդիր իւրենց հրաժարի և պուրժուազին ծաղրեց մեզ իբրեւ անհնուատես իբրեւ ոռաւելապէս գործաւոր դասակարգէն կողմուած հաւաքականութիւն ու ցոյց տուաւ մեզի փրկութեան միակ հանգրուան մը, այդ հանգրուանը կը կոչուէր Միջերկրական Մովսերը այս իրողութիւնները հետզհետէ պարզուեցան

մեր աչքերուն առջև, Կիլիկիոյ Հայ Խնաէլիքէնսը
ամենայն հեղաթիւամբ սրտչեց լքել Կիլիկիան կոչ-
ուած հայկական աշխարհը:

Այս կարգի խորհրդածութիւններն էին, որ
մեզ ալ մղեցին գէպի վերադարձ: Իրազեկ ըլլալով
հանդերձ շատ մը տխուր ճշմարտութիւններուն, տա-
սը ամսուան մեր Կիլիկիան բնակումին վերջ կու-
տանք: Տասը ամիսներ առաջ գեղեցիկ յոյսերով
բնակութեամբ եկած ու հաստատուած էինք Կիլիկիոյ
երկնակամարին տակ. այժմ, բոլորովին յուսահատ
կը բաժնուինք երբեմնի մեր հայրենի բնաշխարհէն.
ընկճուած ու անբաժնի հողեմաշ վիճակով մը ճամ-
բայ կ'ելլենք Ալէքսանտրէթի վրայով գէպի Պէյ-
րուսթ: Այս անգամ հայոց ծոցը փաթարկուտ ու ալե-
կոծ վիճակ մը կը ներկայացնէր, անիկա ևս տխուր
կ'երևար, որովհետեւ իր իսկական աէրն ու տիրականը
կարծել թէ անվերջօրէն պիտի բաժնուէր իրմէ: Մեր
շոգենաւով Հայոց Ծոցէն բաժանումը եղաւ չափա-
զանց յուզիչ, մենք կրցինք միմիայն մեր աչքերէն
հոսած արցունքի շարք մը կաթիլները նուիրել ցան-
կալի Կիլիկիոյ երբեմնի զուարթ ծովափներուն. մեր
շոգենաւը երեկոյեան ուշ տանն սուլիչի երեք սըր-
սաշարժ սրտստմով ճամբայ կ'ելլէ գէպի փիւնիկեան
աշխարհը, և մէկ գիշեր երազկուտ քուն մը քաշելէ
յետոյ, առաւօտեան արեւածագէն քիչ վերջ կը հաս-
նինք Պէյրուսթի նաւահանգիստը, և մեր այս վերա-
դարձը մեզ կը պարգեւէ առաւել ևս խանդավառու-
թիւն, որ առաւել ևս պարտաճանաչման ոգի:

ՎԵՐՍՏԻՆ ԳԼՊԻ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹԻՒՆ

Կիլիկիան արտագաղթէն մէկ ամիս առաջ երբ Պէյրուսթ հասանք, մեր առաջին գործը եղաւ դարձեալ հետաքրքրուիլ մեր ազգային ցաւերովը և լքուել կաղմակերպչական լուրջ աշխատանքի։ Այն Ազգ. Միութիւնը որուն մասին նախապէս խօսած ենք, ի զօրս կը մնար իբրեւ հեղինակութիւն և իբրեւ վերին մարմին։ Պարագաներու բերումով վերստին անարժանաբար անդամը դարձանք յիշեալ մարմինին։

Կիլիկիայէն կը ստանայինք ամէն օր ոչ յուսադրիչ լուրեր։ Մեր թանկագին ու պատուական հայ կոմուտորները, որոնք լքած իրենց ապահով և հանգիստ կեանքը, հեռուոր ավերէն ճամբայ ինկած էին դէպի Կիլիկիա իրենց արեւակիցներուն օգնութեան փութալու և արդար և անկեղծ մտադրութեամբ և ապագայ զեղեցիկ երազներով տոգորուած, դժբաղդարար յռատախաբ կ'ըլլային։ Նախապէս՝ «Լեւոն Սորիան» ապա՝ «Լեւոն Արմենիէն»՝ անունի սակ հերստարար գործող և կռուող հայկական այս բանակը, որ Արարայի ճակատամարտով ցոյց տուած էր աննկարագրելիօրէն մեծ կորով և քաջութիւն ունեցող ազգի մը իր բոլոր յաակութիւնները, Կիլիկիան արտագաղթի շշուկներովը այժմ լքօրէն ընկճուած երեսօթ մը կը ներկայացնէր։

Պէյրուսթի Ազգ. Միութիւնը աւրող այս անցուղարձերուն դիտակ, ցաւագին սրտով կը պատրաստուէր դիմագրաւելու նորանոր անակնկալներ։

Արաադազթին լուրը հետզհետէ պաշտօնական գոյն
կը ստանար և վերջին ստացուած լուրերը պարատ-
ւորցուցին յիշեալ մարմինը լուրջ աշխատանքի լըծ-
ուելու:

Ա Ր Տ Ա Կ Ա Ր Գ Ժ Ո Ղ Ո Վ

Ազգ. Միութեան առաջին գործը եղաւ Պէյ-
րութի մէջ զուամարեկ բացառիկ նիստ մը: Այս ար-
տակարգ նիստին հրաւիրուած էին շատ մը ազգա-
յիններ երեք քոյր յարանուանութիւններէն: Նիստին
գլխաւոր օրակարգն էր Կիլիկիան արաադազթին առ-
թիւ Պէյրութ հասնող հայ գաղթականներու տեղա-
ւորման հարցը: Երկար խորհրդակցութիւններէ և
կարծիքներու փոխանակութիւնէ վերջ՝ ժողովը ո-
րոշեց դիմել հոգատար իշխանութեան և առաջին
հերթին Պէյրութ հասնող գաղթականներուն համար
ապահովել զինուորական վրաններ, միւս կողմէ՝ ժո-
ղովը մասնաւոր յանձնախումբ մը նշանակեց՝ գլխա-
ւորութեամբ՝ Հ. Պօղոս վրդ. Արիսին և Հ. Յակոբ
վրդ. Նէսիմեանին: զիմեղու համար Մարտիրթ Ամե-
նապատիւ Պատրիարք Հօր խնդրելով որ միջամտէ
ֆրանսական զինուորական իշխանութեան հրամանա-
տարութեան մօտ և ապահովէ Կիլիկիայէն հասած
նաւերուն պարպումը Պէյրութ: Հայ կաթողիկէ հո-
գեւոր հայրերուն առաքելութիւնը յաջողութեամբ
պսակուեցաւ: որովհետեւ Պատրիարք Հօր միջամտու-
թիւնը ապարդիւն չանցաւ: մէկ կողմէ՝ ապահովուե-
ցաւ զինուորական իշխանութեան աջակցութիւնը

դադրեց իր անհոգութեան հետ և միայն
կողմէ չնորհիւ թափուած Զանգերաւն, այն ամէն
նաւերը որոնք կիլիկիան հայ դադրեց իր անհոգութեան
նաւերը թափուած Մերսինէն ճամբայ ինկած էին դէպի Ե-
գիպտոս, Յրանտա կամ ալլուր, կը ցաւինք խոս-
տովանելու թէ՛ մեր դժբաղդ հայրենակիցները մեր-
ժուած էին ընդունուելի որեւէ օտար նաւահանգիստ,
մինչդեռ պարագայն նոյնը չեղաւ Պէյրութ ժամանող
նաւերուն համար։ Յրանտական Բարձր Փօսթերը
արտանկի կիլիկիան դադրեց իր անհոգութեան
Պէյրութ ժամանող բոլոր նաւերուն որ իրենց գոյ-
քերովը միասին նաւահանգիստ ելլին և Ազգ. Միութեան
կողմէ նշանակուած վայրը անհոգութեան զին-
ուորական իշխանութեան կողմէ արտամղուած
վաթուռն վրաններուն տակ։ Այս վայրը կը գտնուէր
քաղաքին ամենազեղեցիկ և օգտասուն թաղամասի մը
մէջ, ծովահայկաց անտարանով մը օժտուած և ըն-
դարձակ դաշտագետնի մը վրայ։

Վ Բ Ա Ն Ա Ք Ա Ղ Ա Ք

Կիլիկիան արտադադրը Պէյրութահայրութեան
համար զստուգութեան նոր դուռ մը բացաւ։ Ազգ. Միութեան
կողմէ եղած օգնութեան կոչը բացառիկ
խանդավառութեամբ դիմաւորուեցաւ և բոլոր Պէյ-
րութահայերը անխափ իրենց կարելի միջոցները ի
սպաս դրին, նիւթաբարոյական աջակցութիւննին
չխնայելով, օգնութեան փութալով իրենց դժբաղդ

տրենակիցներուն. այսպէսով՝ մասամբ թեթեւցած եղաւ Ազգ. Իշխանութեան ուսին բեռեցուած ծանր ու պատասխանատու աշխատանքը յաջողութեամբ պըսակուելու տեսակէտով: Ազգ. Միութիւնը իր անդամներուն բոլորն ալ՝ որոնք անձնակրօքաբար կ'աշխատէին՝ շարժման մէջ գնելով աշխատանքի ու գործի դասաւորում յառաջացուց) և ակնարկուած դաշտագետինն վրայ հաւաքուող գաղթականները հետզհետէ սկսան ամփոփուիլ ու իրենց օրտպահիկը կամ տպրուտը տպահովելու միջոցներ որոնել: Այս մասին ևս Ազգ. Միութիւնը մեծ դիւրութիւններ ընծայեց բազմաչարչար գաղթականներուն: Վրանաքաղաքը (այսպէս կոչուեցաւ գաղթականներուն տեղաւորուած վայրը) մերթ ընդ մերթ այցելութիւնը կ'ընդունէր Հոգատար Իշխանութեանց կողմէ զրկուած քննիչներուն և տեղական կառավարութեան կողմէ նշանակուած խնամատար մարմնոյ անդամներուն: Վրանաքաղաքը օր ըստ օրէ կ'ընդարձակուէր. զինուորական Իշխանութեան կողմէ տրամադրուած վաթսուն վրաններուն շնորհիւ հետզհետէ կ'աւելնար նաև տախտակաչէն անակներուն թիւը ու շատ չանցած վրանաքաղաքի բնակչութիւնը կ'օժտուէր երեք յարանուանութեանց մէյ մէկ եկեղեցիներովը՝ ազգ. երկսեռ վարժարաններովը՝ մանկապարտէզներովը՝ ընթերցասրահներովը՝ հաւաքատեղիներով եւ ընդարձակ շուկայով մը: Ազգ. Միութիւնը երեք տարի անընդհատ վերին հսկողութիւնը ստանձնեց յիշեալ վրանաքաղաքին: Ազգ. Միութեան հսկողութեան շրջանին վրանաքաղաքը զերծ մնաց երիտասարդութիւնը դէ-

պի վատասերում առաջնորդող շատ մը վտանգներէն, բնակչութեան խստիւ արգելուած էր վրանաքաղաքին մէջ հաստատել գինետուն, սրճարան կամ բաղ-դախաղի յատուկ զբօսավայրեր: Բայց երբ յիշեալ մարմինը ձեռք քաշեց վերին հսկողութեան գործէն, տնկից յետոյ վրանաքաղաքը կորսնցուց իր նախկին լրջութենէն շատ մը բաներ, սակայն գաղթականութիւնը հետզհետէ բազմանալով վրանաքաղաքը դարձաւ խոշոր և ուշագրաւ տախտակաշէն թաղամաս մը, ընդարձակ և հարուստ շուկայով մը օժտուած, ուրտեղ կարեւոր առեւտրականներ և կիլիկիայէն գաղթած յայտնի վաճառականներ սկսած էին իրենց վաճառականական գործը շարունակել կանոնաւորաբար Պէյրութի մեծ վաճառատուներու հետ, առեւտուրը զգալի թափով յառաջ կը տարուէր և վրանաքաղաքի շուկային մէջ կը տիրր առնէր իր զգալի եռուղեւ:

Վրանաքաղաքի Ազգ. Սահակեան երկսեռ վարժարանը իր Զօրավար Անդրանիկեան մանկապարտէզով միասին կը ներկայացնէր նախամեծիկ վիճակ մը. Մ. պարտէզի ընդարձակ սրահին մէջ տ-մէն երեկոյ տեղի կ'առնէր ներկայացում հանդէս—հաւաքոյթներ. վարժարանի նախակրթարանին բաժնի ուսուցչական կազմը մօտաւորապէս կը գերազանցէր Պէյրութի քոյր վարժարաններէն շատերը: Վրանաքաղաքը ինքն իր մէջ բաժնետուած էր մի քանի թաղամասերու և իւրաքանչիւր թաղամաս ունէր իր պատասխանատու մէկ վարիչը. վերջերը տեղական կառավարութեան կարգադրութեամբ վրանաքաղաքը ունեցաւ յատուկ տնօրէններ, որոնք կոչուած

էին կառավարելու բնակչութեան կարգն ու սարգը:

Ինչպէս որ գիտենք, վերոյիշեալ վրանաքաղաքը գիշեր մը անակնկալ հրդեհ ծագելով, տարածուած բացը մի քանի ժամուան ընթացքին մոխիրի վերածնց ամէն ինչ... Հակառակ կառավարութեան կողմէ եղած փութկոտ օգնութեան, բնակչութիւնը այս դժբախտ կացութեան առջև բարոյալքուած ըլլալով, ցիր ու ցան եղաւ Պէյրութի արուարձանը եղող Անդր—Նահրի մէջ, և այս կերպով ու վախճանը արուեցաւ յիշեալ երբեմնի շէն վրանաքաղաքին:

Վրանաքաղաքի մասին մեր խօսքը չաւարտած, փակաղծի մէջ յիշենք հետեւեալ պարագան, իբրև պատմական իրողութիւն մը:

Կիլիկիան արատաւազթի սկզբնաւորութեան շրջանին, օր մը Ալզ. Միւլթեան ներկայացան երկու Հաճնցի հայրենակիցներ, որոնք ի ձեռին ունէին ստորեւ հրատարակուած և պատմական արժէք ներկայացնող վկայագիրը. —

ԱԶԳԱՅԻՆ ՄԱՐԽԻՆՆԵՐՈՒՆ

Ազգովին ծովն եմք ինկեր, օգնեցեմ.

Սահակ Բ. Կար. աւերակաց

Սիրելի ընթերցող, ինչպէս որ կը տեսնէք, ձերու նախնիք վեհափառն առաջին անգամ ըլլալով կը սատարէր ԱԻՆՐԱԿԱՅ մականունը:

Ալզ. Միւլթեան վերագրեալ վկայագիրը ներկայացնող երկու հերոս հաճնցիներուն ընծայեց իր նիւթարարոյական աջակցութիւնը, առանց սա-

կայն խտրութիւն մացնելու տրատագութող մեր հայ-
րենակիցներուն մէջ: Բարեբախտաբար պարագա-
ներն ու պայմանները հետզհետէ նպաստեցին մեզի
ու մենք վերստին լծուեցանք ազգանուէր աշխա-
տանքի և ԱԽԵՐԱԿԱՅ կաթողիկոսը մօտիկ ապագա-
յին կրցաւ ունենալ հանգստաւէտ վեհարան մը՝ օժ-
տուած չառ մը առաւելութիւններով ու այս պարագան
առաւելապէս կը պարտինք մեր ժողովրդի նը-
ռերունդ սգիին:

ԿՐԹԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹԻՒՆՆԵՐ

Կիլիկիան տրատագութէն անմիջապէս վերջ
Ազգ. Միութիւնը ձեռնարկեց կազմակերպել ազգ.
վարժարանները՝ համազգային գետնի վրայ և այդ
նպատակաւ նշանակեց Պէյրութի կեդրոնական հոգա-
րարձութիւնը: Այս հոգարարձութիւն կ'առննայե-
տէր Պէյրութահայ հին ազգայիններէն բնիկ Տիգրա-
նակերացի Սամուէլ Սարրաֆեանը՝ իսկ անդամները
կը ներկայացնէին երեք յարանուանութեանց ներկա-
յացուցիչները: Համազգային գետնի վրայ սանդը-
ռած այս մարմինը չառ երկար կեանք չունեցաւ.
քոյր յարանուանութիւններէն երկուքը իրենց պատ-
ճառարաննալ հրաժարականները ներկայացնելով հե-
ռուցան հոգարարձական մարմնոյ անդամակցութենէն
և այս պարագան պատճառ դարձաւ որ վարժարան-
ներու կրթական ու տնտեսական բաժանում տեղի ու-
նենայ: Ազգ. երկսեռ վարժարան անունի տակ Լիբա-
նանի ըսոր շրջաններու մէջ հաստատուեցան տասն

և ինը կրթարաններ իրենց յարակից Մ. պարտէզ-
ներովը միտաին: Միւս երկու քոյր յարանուանու-
թիւններն ալ իրենց կարգին ունեցան ոչ երկսեռ
վարժարաններ: Երեք քոյր յարանուանութեանց
վարժարաններու պիւտճէն կը հաշվայթուէր աշա-
կերտական տարեթոշակներովը և հոգատար իշխո-
նութեան կողմէ յատկացուած մասնաւոր նպաստու-
իւր:

1928ին Պէյրութի Հայ կաթողիկէ կրթական
հաստատութիւնները կը ներկայացնէին հետեւեալ
պատկերը:

1.— Զմամառան Ընծայարան

2.— Հռիփթիմեան Վարժարան աղջիկներու

3.— Լուսաւորիչ » »

4.— Կ. Հայոց » մանչերու

5.— Վրանաքաղաք » »

6.— » » աղջիկներու

7.— Կ. Հայոց սրբանոց—դպրոց մանչերու

1.— Զմարեան Ընծայարանը ունէր երկու
տարեւան կեանք: Որը հաստատուած էր Սեօր Բեփա-
րաթիւսներուն նախկին շէնքին մէջ: Հաս ժողովար-
ուած էին Զմամառ վանքին 12 քահանայու աշակերտ-
ները: Ասոնք կը հետեւէին Յիսուսեան Հայրերու
համալսարանին դասերուն, իսկ հայերէն լեզուն կ'ու-
սանէին իրենց սեփական դպրոցին մէջ: Այս հաստա-
տութիւնը կը կառավարուէր Զմամառի միաբանու-
թեան մեծաւորին, Գերյարգելի կարապետ Մ. Վ.
Պատուհասեանի կողմէ. աշակերտներուն վերակացուն

էր Գեր. Անդրէաս Վ. Մանկասարեան, Հոգեւոր հայրն էր Գեր. Մինաս Ծ. Վ. Տէր Մինասեան, իսկ հայերէնի ուսուցիչն էր Գեր. Խաչիկ Վ. Աթոնասեան, Այս հաստատութեան ամբողջ ծախքերը կը հագար Զմմատեան Միտրանութիւնը:

2. — Հռիփսիմեան վարժարանը իր վեց տարուան կեանքով հաստատուած էր Հ. Կ. Պատրիարքարանին միջին յարկին մէջ՝ Պոլսէն եկած Ա. Յ. Քոյրերու կողմէ: Աշակերտուհիներուն միջին թիւը միշտ եղած էր չէնքի տարողութեան համեմատ, հարիւրէն աւելի: Ունէր ութը մնայուն և երեք այցելու դաստառուներ: Նախապատրաստական տարիներէն զատ կար նաեւ ուսումնական իննամեայ ընթացք մը, որ բաժնուած էր երեք հաւասար շրջաններու: Ուսման նիւթերն էին. կրօնագիտութիւն, Հայերէն, Ֆրանսերէն և Արաբերէն լեզուները, բնական գիտութիւններ, ուսողութիւն, պատմութիւն, աշխարհագրութիւն, դործիական և ձայնական երաժշտութիւն, նկարչութիւն և ձեռագործի գանազան տեսակներ: Շատ ուժ կը արուէր Ֆրանսերէնի և աշակերտուհիները կը պատրաստուէին նոյն լեզուով քննութիւն տալու Բարձր Գոմիսէրութեան կրթական վարչութեան առջև և անկէ ուսման վկայական առնելու: Այս վարժարանին ծախքերը կը հոգացուէին աշակերտուհիներու տարեթոշակով և Բարձր Գոմիսէրութեան նպատառով: Ա. Յ. Քոյրերը յաջորդող շրջաններուն մէջ կրցին ունենալ իրենց սեփական կրթարանը:

3. — Այս վարժարանին վարի յարկին մէջ

կար Գաղթականաց աղջիկներու յատուկ Լուսաւորիչ վարժարանը, ուր կ'ընդունուէին նոսն փոքր ման-
չեր, Ասիկա կը կառավարուէր Ա. Յ. Քոյրերէն մէ-
կուն կողմէ, Ունէր 150—200 աշակերտուհի և երեք
միայուն վարժուհի, Հոս կ'աւանդուէր Հայերէն և
Ֆրանսերէն լեզուները և տարրական ուսումներ, Ա-
շակերտուհիներուն մէկ մասը ձրիավարժ էր, միւս
մասը կը վճարէր փոքրիկ թոշակ մը որ միանալով
Բարձր Գոմիսէրութեան նպաստին և բարերարներու
պատահական օգնութեան ծախքերը կը փակէր:

4.— Կ. Հայաց մանչերու վարժարանը հա-
տատուած էր Կ. Հ. Եկեղեցիին կից սենեակի մը մէջ
որ հազիւ 40—50 աշակերտ կը պարսնակէր: Ունէր
մէկ միայուն և երկու այցելու վարժապետներ: Դա-
սերը կ'աւանդուէին Հայերէն և Ֆրանսերէն լեզու-
ներով: Ծախքը կը հազար Պատրիարքութիւնը:

5—6.— Վրանաքաղաքի մանչերու և աղջիկ-
ներու վարժարանները կը գտնուէին Բիսուսեան Հայ-
րերու վարչութեան տակ: Ունէին 500ի. չափ աշա-
կերտ և աշակերտուհիներ:

7.— Կ. Հայաց որբանոցը հատատուած էր
Էշրէֆիյէ թաղին ծայրը: Ծախքերը կը հազացուէին
Նիւ Իսթ Ռլիֆի կողմէ: Տեսուչն էր Գեր. Պօղոս Վ.
Արիս, իսկ վերակացուն՝ Գեր. Պօղոս Վ. Պղտիկեան:
Որբերու թիւն էր 80 որոնց պղտիկները ուսումով
կ'ըբազէին իսկ մեծերը՝ արհեստով:

Իսկ Հայ Բազմազան համայնքը իր եկեղեցի-
ներու կողքին ունէր կրթական փոքրիկ վարժարան-
ներ յարակից Ս. պարտէզներով, որոնք ևս ուսման

տեսակէտով կարեւոր ծառայութիւններ կը մատուցանէին հայ մատուց սերունդին. ասկէ զառ յիշեալ համայնքը ունէր մանչերու և ազջիկներու յատուկ բարձրագոյն կրթարարներ, որոնք հետզհետէ հայ ժողովուրդին մէջ կ'արթնցնէին հետաքրքրութիւն և որոնցմէ զուրս եկած աշակերտ — աշակերտահիները պատրաստուած կ'ըլլային ազգ. առնձիկ գաւառաբար կութեամբ օժտուած սերունդ մը:

Հայ ազգ. վարժարաններու շարքին Սահակեան ազգ. երկս. վարժարանը որը — ինչպէս որ վրանաքաղաքի մասին մեր յուշած նօթերու շարքին բոսած ենք — ունէր ուսուցչական ներկայանալի և ուժեղ կազմ. ասոնցմէ մի քանին սիրուած ու ճանչցուած ուսուցիչներ էին որպիսին են՝ Գառնիկ Ս. Գաւիթեան, Սարգիս Տխրունի, Արմենակ Էլոյեան և Սիւրմէլեան: Այս վարժարանը ապագային դարձաւ Պէյրութահայ ազգ. նախակրթարաններու բարձրագոյնը շնորհիւ իր սիրուած անօրէն Բ. Ժամկուհեանի տննաւէր ու անխնայ կեցումքին. յաջորդաբար կրթական բոլոր տարեշրջանները Սահակեան կրթարանին համար նկատուեցան բախտաւոր տարիներ, սակայն Սահակեան ազգ. երկս. վարժարանը ունեցաւ նաեւ իր անօր ու անբաղձալի մէկ պարագան... այս անօր ու անբաղձալի պարագան պէտք է բացատրել վարժարանին տուած մէկ կարեւոր կորուստովը. այս կորուստն էր Սուրիոյ և Լիւանանի բնակիչներու սոխակը հանդիսացող միանգամայն՝ յանդուգն հրապարակագիր Սարգիս Տխրունին:

Ս. Նշան ազգ. երկս. վարժարանն ալ կը

ներկայացնէր կրթական նախաձեռնի վիճակը՝ շնորհիւ իր երբեմնի անօրէններ՝ վահրամ Արծրունիին և անոր յաջորդող Դէորդեանինը ինչպէս նաև յայտնի ու սիրուած ուսուցիչներ Բենեամին Ժամկոչեանի և Նշան Քէօմիւրճեանի (այս վերջինս Փրանսերէնի մասնագէտ)։ Այս վարժարանին տարեկան պիւտճէն կը հայթայթուէր տշակերտներու կողմէ՝ գոյացած տարեթուշտկներովը և Հոգատար Իշխանութեան յատկացուցած նպաստովը։

Հոս աւելորդ չպիտի բլլար նշել իրողութիւն մը։ Ս. Նշան ազգ. երկս. վարժարանը իր սկզբնական շրջանին մէջ զուրկ էր վարժարանի մը յատուկ ներկայանալի շէնքէ մը և այս պարագան զբլխաւոր մատնոգութիւնը կը կազմէր օրուան հոգաբարձութեանը որը ամէն զոհոգութեան յանձնառու եղած էր՝ սրպէսդի վարժարանը ունենար իր սեփական շէնքը։ Հոգաբարձութեան մրաջան անդամները սրահեցին եկեղեցւոյ շրջափակին մէջ կառուցանել նոր շէնք մը՝ բայց հոգաբարձութեան մատնոգութեան առէն առաջ պարագան կը կազմէր սընտուկին մէջ դրամի չգոյութեան հարցը. այս նիսուր իրողութիւնը չկրցաւ յուսահատեցնել հոգաբարձութիւնը. առաջին պատահութեամբ իսկ հրապարակ հանուեցան 100 պարտատոմսերը՝ սրահեց իւրաքանչիւրը կ'արժէր 5 Լիր. ոսկի. այս պարտատոմսերէն երկուքական հատ հոգաբարձութեան անդամներուն արուեցանը իսկ մնացածներն ալ բաժնուեցան կրթութիւնը ազդայիններու միջև և այս կերպով հինգ հարիւր Լիր. ոսկիի պատկառելի գումար մը ապահով-

ուեցաւ կառուցուելիք շէնքին յատկացուելու նպատակաւ, երբ շէնքի շինութեան գործը մէկ կողմէ առաջ կը տարուէր, միւս կողմէ հագարարձութեան տնխոնջ անդամները մտածեցին ու կողմակերպեցին նոր ձեռնարկ մը: Եւս նոր ձեռնարկով ապահովուեցաւ հարիւր հազար Լիբանանեան դահեկանի պատկառելի գումար մը: Նորակառոյց վարժարանին շինութեան գործը անցաւ խիստ յաջող և օրուան հագարարձութիւնը ստացաւ Երուսաղէմի գիւղացի Պատրիարք Լուսահոգի Գուրեան Սրբազանի մէկ կոնդակ օրհնագիրը: Կրթական այս հաստատութեան նախնական գործին մէջ կարեւոր ու բարեբար դեր խաղացին օրուան հագարարձութեան անդամ ողջայիններէն՝ Ս. Սարրաֆեան, Վ. Վարժապետեան, Գ. Աղաճանեան, Մ. Մեղրիկեան, Գ. Տէր Կարապետեան, Ծ. Սաքիասեան, Վ. Ուղուշեան և Մ. Նաճարեան: Ս. Նշան վարժարանը յաջորդող տարեշրջաններուն մէջ ժողովուրդին առաւ ազգ. տահմիկ դատարարակութեամբ օժտուած ստուար թիւով աւարտականներ:

Ս. Նշանի նորաշէն ընդարձակ սրահը որ միջնորմներով դասարաններու բաժնուած էր ի հարկին, ունէր իր բնոյն ուրտեղ յաճախ տեղի կ'ունենար ներկայացում, հանդէս երեկոյթներ ևլն.:

Այս վարժարանը որ կը ներկայացնէ Պէյրութի Լուսաւորչական համայնքին կեդրոնական կրթարանը, տարիներու ընթացքին ունեցաւ հագարարձական և ուսուցչական կազմի փոփոխութիւններ, և սակայն վարժարանը կրթական տեսակէտով հետզհետէ նախաձեռնելի վիճակի մը վերածուած ըլլալով, քաղա-

քի յիշեալ համայնքին գուրգուրանքին, նիւթարարոյական աջակցութեանը արժանացաւ:

Պէյրութի մէջ Հայութեան համար ազգային կրթական հաստատութիւններէն զատ զանազան հասանքներ կամ խմբակցութիւններ ստեղծեցին միջնակարգ մի քանի վարժարաններ: Աստեցմէ գլխաւորը կրնանք նկատել Ճեմարանը՝ որու տուած տարրականները ազգին պատուարեր երիտաւարդներ զարգան:

Վերոյիշեալ ճեմարանէն անջատ Հ. Բ. Ը. Միութիւնը ևս հիմնեց Դարուհի Յակոբեան անուն նախանձելի կրթարան մը:

Պարագան նոյնը ևզաւ նաև Հ. Կ. և Բողոք. համայնքներուն համար:

Հարկադրուած կ'զգանք զնահատանքի մի քանի խօսք ուղղել հետևեալ ազգօգուտ հաստատութեանց միանգամայն՝ որոնք Սփիւռքի մէջ կրցած են առաւել կամ նուազ չափով օգտակար հանդիսանալ իրենց արեւնակիցներուն բազմապիսի մարզերու մէջ:

Այս հաստատութիւններն են. —

Հայ Դպրոցասէս Կանանց Ընդհանուր Միութիւն. — Կանացի այս շարժումը հայ չքաւոր մասնաշաղ սերունդի կրթական գործը մեծապէս զիւրացուցած է իր նիւթարարոյական գործնական աջակցութեամբը, ազգային շատ մը վարժարաններէն ներս յիշեալ հաստատութեան կազմէ որդեգրուած են մեծ թիւով ուսանող ուսանողուհիներ, որոնց կրթական թոշակին հետ միասին զասագրքերն ալ ապա-

հովուած են վերոյիշեալ միութեան կողմէ: Միութիւնը Մասնաճիւղեր ունի Լիբանանի բոլոր կեդրոն քաղաքներուն մէջ:

Օգնութեան եւայ. — Այս հաստատութիւնն ալ ունի քաղմաթիւ Մասնաճիւղեր Սուրիոյ և Լիբանանի շրջաններուն մէջ և ջանացած է իր կարելի միջոցներով օգտակար հանդիսանալ հայ չքաւոր դասակարգին:

Վերաճնունդ. — Անկուսակցական կազմակերպութիւն մը որը զգալիօրէն ուժ տուած է երիտասարդ. — երիտասարդուհիներու մտամշակութային դործին:

Վերոյիշեալ հաստատութիւններէն զատ կան նաեւ Օրիորդաց և Երիտասարդաց այլ միութիւններ որոնց բոլորն ալ իրենց կարգին օգտակար հանդիսացած են գաղութահայութեան:

Հ Ա Յ Կ Կ Ա Ն Մ Ա Մ Ո Ւ Լ

Լիբանան. — Պէյրութահայ առաջին անկախ հայաթներթ: Սկզբնական շրջանին պատասխանատու տնօրէն՝ Մ. Աճէմեան. խմբագիրներ՝ Ղազար Չարըզ և Երուսնդ Քէշիշեան և Արշակ Գազանճեան: Այս թերթը կարճատեւ շրջանէ մը վերջ ունեցաւ հետեւեալ վարչական և խմբագրական կազմային փոփոխութիւնը: Պատ. տնօրէն Ժօզէֆ Աճէմեան, խմբագրատպիւ՝ Մ. Նաճարեան, խմբագիրներ՝ Ե. Քէշիշեան:

Տօքթ. Ս. Տաքէսեան և ժան Պըշարա :

Փիւնիկ. — Պատ. տնօրէն՝ Տօքթ. Պ. Մեւքոն-
եան, խմբագիրներ՝ Արշակ Յովհաննէսեան և Խոսրոֆ
Թիւթիւնճեան :

Նոր Փիւնիկ. — Պատ. տնօրէն՝ Իրաւաբան Խ.
Թիւթիւնճեան, խմբագիր՝ Ա. Յովհաննէսեան :

Վերջին երկու թերթերն ալ կարճատեւ կեանք
ունեցան :

Ազդակ. — Տէր և տնօրէն՝ Հայկ Պալեան : Այս
թերթին յարատեւման պարագան հայ լրագրական
կեանքին մէջ տնտեսքն թաց և դնահատուկի երեւոյթ
մըն է :

Ժողովուրդ. — Ժողովրդական անկախ օրա-
թերթ, Տնօրէն — Խմբագիր՝ Մ. Աղազարեան : Այս
թերթին կեանքը կարճատեւ եղաւ, ոճրագործ ձե-
ւամբ մը իր խմբագրին սպաննութեամբը :

Հայ Կեանք. — Քաղաքական հայաթերթ. Տնօ-
րէն — Խմբագիր՝ Միքայէլ Շամատնճեան : Խմբագրին
տնականաւ մահովը թերթը դադրեցաւ լոյս տեսնելէ :

Արարա. — Հնչակեան օրկան : Խմբագիր՝ Ա.
Էլճանեան : Քաղաքական, հասարակական և ընկերա-
յին օրաթերթ, մինչև այսօր իր հրատարակութիւնը
կը շարունակէ :

Ժողովուրդի Զայն. — Զախակողմեան օրաթերթ,
հրատարակութիւնը դադրած է կառավարական մաս-
նաւոր մէկ հրամանագրովը :

Հորիզոն. — Քաղաքական անկախ հայաթերթ :

Պատ. տնօրէն՝ ժ. Աճէմեան. խմբագիր՝ Մ. Նաճարեան:

Առաւօս. — Տնօրէն—խմբագիր՝ Հ. Տէվէճեան: Հրատարակութիւնը դադարած խմբագրին Հայաստան մեկնումովը:

Առաւօս. — Փաղաքական և ընկերային օրաթերթ. խմբագիր՝ Ճէրէճեան: Այս թերթն ալ անժամանակ կերպով կախակաշուեցաւ կառավարութեան կողմէ:

Զարթոնք. — Պատ. տնօրէն՝ Փարունակ Թովմատեան: Ռամկավար օրկան: Մինչև այսօր լոյս կը տեսնէ իբրեւ քաղաքական օրաթերթ:

Կրթասիրաց. — Գրական ամսաթերթ: Պատ. տնօրէն՝ Ե. Քէշիշեան. խմբագիր՝ Մ. Նաճարեան: Երկու տարուան կեանք ունեցած է:

Սահակ—Մեսրոպ. — Տէր և Տնօրէն—խմբագիր՝ Մ. Նաճարեան: Գրական, դիտական և գեղարուեստական պատկերազարթ ամսաթերթ: Չորս տարուան կեանք ունեցած է:

Ժպիտ. — Երգիծական ամսաթերթ: Տէր և Տնօրէն Մ. Նաճարեան: Լոյս տեսած միայն մէկ տարի:

Հոս—Հոս. — Երգիծական շաբաթաթերթ: Տնօրէն—խմբագիր՝ Մկրտիչ Կապրաշ: Կարճատեւ կեանք մը ունեցած է:

Ազդակի Շաբաթօրեակ. — Խմբագիր՝ Կ. Սասունի:

Աւետիք. — Պաշտօնաթերթ Հ. Կ. Պատրիար-

քորանի: Կը հրատարակուի պարբերաբար:

Հասկ.— Պաշտօնաթերթ ամսագիր Անթիլիանի
Կաթողիկոսարանին:

Ազգարար.— Շաբաթաթերթ Պոստ. խմբագիր՝
Արսէնեան: Խմբագրին ցաւալի մահէն յետոյ իր
հրատարակութիւնը չէ դադարած:

Մասիս.— Շաբաթաթերթ Հ. Կ. Համայնքին:
Արտօնատէր—Տնօրէն՝ Բարսեղ Թօփուզեան. խմբա-
գիր՝ Հ. Քաջարեան:

Ակօս.— Պաշտօնաթերթ Ճեմարանի. խմբա-
գիր՝ Գառնիկ Բանեան: Կը հրատարակուի պարբերա-
բար:

Ջահալիր.— Գրական շաբաթաթերթ. Տնօրէն
խմբագիր՝ Վարդան Գէորգեան. դադարած է:

Անի.— Գրական պատկերազարթ պարբերա-
թերթ. Տնօրէն—խմբագիր՝ Վահէ Վահեան. ունի աշ-
խատակիցներու ընտրանի դասակարգ մը:

Երիտասարդ Հայունի — Խմբագրութիւն՝ Սիրան
Ջարիֆեան: Ընտիր բովանդակութեամբ պարբերա-
թերթ մը:

Կայծ.— Պաշտօնաթերթ Հ. Մ. Մ. ի: Կը հրա-
տարակուի կանոնաւորաբար և ունի ընտիր աշխա-
տակիցներ: Կը բովանդակէ մարմնամարզական, ըն-
կերային, գիտական և հասարակական նիւթեր:

Սինուռ.— Տէր և Տնօրէն՝ Կ. Տօնիկեան: Գրա-
կան պարբերաթերթ, Դադարած:

Պատանեկան Արձագանգ.— Մանկավարժական
պարբերաթերթ:

Որբաւթնաբնի Աստղը. — Պատ. անօրէն՝ Վառաժ
Ստամբուլէնան. կը հրատարակուէր ամէն ամիս կանոն-
նաւորաբար և կը բովանդակէր երիտասարդութիւնը
հետաքրքրող օգտակար նիւթեր:

Վերին նշանագրուած թերթերն ու պարբերա-
թերթերը կը ներկայացնեն Լիբանանահայ երեսնամե-
կոյ մամուլը:

Մ. Ա. ՈՐԲԵՐՈՒ ԸՆԿԵՐԱՑՈՒԹԻՒՆ

Մերձաւոր Արեւելքի Որբերու Ընկերակցու-
թիւն կաշուած որբախնամ հաստատութիւնը Պէյրու-
թահայ կեանքին մէջ իբրեւ ազգօգուտ ձեռնարկ իր
գոյատեւութեան ընթացքին մեզ պարզեւած է շատ
մը բարիքներ: Այս հաստատութեան շնորհիւ մեր
չտիւահաս սրբերը կրցած են ի մի համախմբուիլ և
իրենց ազգային իղձերուն ու բաղձանքներուն գո-
հացում առլ զանազան ազգանուէր ձեռնարկներով:
Հաստատութիւնը ունեցած է իր ընդարձակ թառե-
րտարանը՝ ուրաւել յաճախ ներկայացուած են ընտիր
բիւններ և սրտնցմէ օգտուած են ոչ միայն որբերն
ու որբուհիները այլ նաև Պէյրութահայ հասարակու-
թիւնը:

Նիւ Իսթ Բիլիմի կողմէ հաստատուած այս ըն-
կերակցութիւնը ունեցած է ընդհանուր հսկիչ մը
յանձին Մր. Ֆառուլին և որուն իբրեւ օգնական երի-
տասարդ ամերիկացի մը Մր. Մըրֆի անուանով:

Մ. Ս. Ռ. Ընկերակցութիւնը ունէր նաեւ հոգատար մարմին մը, Գլխավորարար հետեւեալ ազգայիններէն բաղկացած Գեր. Պօղոս Վ. Արիս, Մ. Տամատեան և Ռ. Իճգաճեան:

Ընկերակցութեան պաշտօնաթերթն էր Որբ Աւարիի Աւար շնուն աժադիրը:

Մէկ խօսքով յիշեալ հաստատութեան շնորհիւ կրցինք ունենալ թէև սրբացած սակայն ընտրանի երիտասարդութիւն մը, սրտնցմէ շատերը մօտիկ ապագային գարձան տիպար ու հայրենասէր ազգայիններ:

Հ. Բ. Ը. Մ Ի Ո Ի Թ Ի Ի Ն.

Հայկական Բարեգործական Ընդհանուր Միութեան մօտին գտլիստ հիւսիսը նպատակը չունինք որովհետեւ 1906էն ի վեր հայ կեանքէն ներս ծնունդ առնող այս մեծ միութիւնը նախախնամական այնպիսի գեր մը կատարած է մեր ազգային, ընկերային, կրթական ու անտեսական գեանի վրայ, որոնց համար հայ ապագայ պատմագիրներ միմիայն հիտցումով պիտի խօսին:

Բարեգործականի բազմապիսի բարեխնամ ձեռնարկներու շարքին մէջ կ'իյնայ «Քէլէկեան — Միսուան» սրբանոցներուն գոյութիւնը մեր յուշերու սկզբնաւորութեանը մասնաւոր կերպով յիշած ենք թէ՛ երբ կ'իլիկեան արտադրողը չէր եղած, Տէօրթ—

Եօլի մէջ Զ. Բ. Ը. Մ. մեծապէս օգտակար կը հանգիստնոր իր աւաքելութեամբը և մեծ բարերար Բէլէկեան լցանի տնտէնով մկրտուած Քէլէկեան որբանոցն ալ իւրայիններուն հետ միասին արտագաղթի դժբաղդ ճակատադրին ենթարկուեցաւ։ Յիշեալ զոյգ որբանոցները կիլիկեան արտագաղթէն անմիջապէս յետոյ հաստատուեցան Պէյրուսթի բարձրաբերձ մէկ թաղամասին մէջ։ Այս միացեալ որբանոցներուն համար Միւսթեան Եգիպտոսի չրջանային մարմինը նշանակած էր խնամակալ կամ հոգատար յանձնախումբ մը։ Այս կ'աշխատակցէր տեղական մասնաձեւի վարչութեան տնդամներուն հետ միասնաբար։ Որբանոցը հետզհետէ աւելի լաւ հաստատութեան մը վերածելու արդար նպատակաւ։ Որբանոցին տեսչութիւնը սկիզբը յանձնուեցաւ ձեռնհաս ու փորձառու հայ կղերի մը։ Բայց տարուէ տարի տեսչական զարծը փոփոխութիւններ կրեց։ Քէլէկեան—Սիսուան միացեալ որբանոցին տեսչութիւնը յաջորդաբար վարեցին Պ. Պ. Նշան Սահաթեան, Տօքթ. Ամատեան, Ղազարոս Ղալիկեան, Հաստատութեան միասնաբար բոլորէն էր Տօքթ. Պ. Մելքոնեան։ Որբանոցը ունէր իր մէկ նուագախումբը որբուհիներէն բաղկացած։

Յ Ա Ր Գ Ա Ն Ք Ս Գ Ա Հ Ա Ն Դ Է Ս

Ինչպէս որ տաճն ազգ ունեցած է իր մեծանուն բարերարները, տնչուշա հայ ազգը բացառու-

թիւն չպիտի կազմէր տարբեր ազգերու շարքին մէջ
և մեր հերոս ժողովուրդն ալ ունեցած է իր բազմա-
թիւ բարերարները և այս բարերարներու գլխաւոր-
ներու առաջին գծին վրայ մենք պարտաւորուած
ենք յարգանքով յիշել Պօղոս Նուպար փաշան։ Այս
անգուգական անձնաւորութիւնը ոչ միայն միջազ-
գային ծանօթ գէմք մը և ոչ միայն հայ ժողովրդի
տնտեսական կարիքներովը մասնագուստ մը եղած է այս-
եղած է նաեւ հայկ. դատի պաշտպան փաստաբաններէն
ամենաուժեղը և ամենաարդարախօսը։ Պօղոս Նուպար
փաշան որդին է Նուպար փաշա մեծանուն հայ բա-
րերարին և որուն անունը Եգիպտոսի պատմութեան
մէջ կարեւոր ու ուշագրաւ անդ մը գրուած ըլլալ կը
թուի և թէ սակայն Եգիպտոսի ապագայ պատմա-
գիրներ խեղաթիւրել չփորձուին իրողութիւնը։ Նու-
պար և Պօղոս փաշաներ — հայր և որդի — մեծա-
մեծ ծառայութիւններ մատուցած են Եգիպտոսին և
այս իսկ պատճառաւ Եգիպտոսի վաղուան պատմա-
գիրները ստիպուած են չափազանց յարգանքով խօ-
սիլ հայ ազգի այս երկու մեծանուն գէմքերու մա-
սին։

Եթէ Հ. Բ. Ը. Մ. ի կազմութիւնը նախախնա-
մութիւն մը եղաւ հայ ազգին համար և տաւելի ևս
նախախնամութիւն մըն էր հայկական այդ մեծ Մի-
ուելեան հիմնադիրներու շարքին Պօղոս Նուպար փա-
շային անուան յիշատակումը։ Միւլթիան ցկեանս
նախադա՛ն անմահն Պօղոս Նուպար սիրուած էր հայ
ժողովուրդի բոլոր դասակարգէն անխափր։ Երբ ան-
խոնջ կերպով իր ազգին աշխատող այս մեծ բարե-
բարը օր մըն ալ իր վերջին շաւնը փչեց և Հայու-

թիւն ամենուրեք սուգի մասնուեցաւ։ Աստժին ան-
գամ ախուր զոյժը երբ Պէյրուսթ հասաւ, քաղաքի
Միսթեան մասնածիւղի նախածեռնութեամբ կող-
մակերպուեցաւ համազգային սգահանդէս մը։ Այս
սգահանդէսը անդի ունեցաւ Պէյրուսթի Ս. Նշան Ե-
կեղեցւոյ շրջափակին մէջ ուրանգ մասնաւոր սգաբեմ
մը պատրաստուած էր և որուն իրենց սիրտյօժար
մասնակցութիւնը ընծայեցին երեք քոյր յարանուա-
նութիւններ և քաղաքական կազմակերպութիւններ։
Այս սգահանդէսին Բարեգործականի կողմէ եղած
մասնաւոր հրաւէրով բանախօսեցին հայ քաղաքա-
կան կազմակերպութեանց երեք ներկայացուցիչներ՝
Մ. Նաճարեան — Ս. Դ. Հնչակեան կուսակցութիւն, և
Սահակեան — Հ. Յ. Դաշնակցութիւն, և Ռ. Էն-
դաճեան — Ռ. Ա. կուսակցութիւն։

Հանգուցեալ Պօղոս Նուպար Փաշայի անունին
Պէյրուսթի մէջ սարքուած համազգային այս մեծ
սգահանդէսը պիտի մնայ մեր պատմութեան մէջ
բացառիկ և աննախընթաց երեւոյթ մը, որովհետեւ
անգուգական մեծ բարերարին մահովը կարծեցեալ
անմիաբան հայ ժողովուրդը անգամ մը ևս իրարու
մօտ կու գար, անգամ մը ևս իրարու հետ ձեռք
ձեռքի տնկելով սեղմումներ կ'ունենար, և անգամ մը
ևս մէկ սիրտ մէկ հոգի միասնականորէն ու միա-
համուռ կերպով կը ներկայանար իր ժողովուրդին։

Մ Ա Ր Զ Ա Կ Ա Ն

Սուրիոյ և Լիբանանի հայ մարմնամարդական երեսնամեայ կեանքի մասին լրիւ տեղեկութիւններ պատմագրելու համար, հարկ պիտի բլլար առանձինն հասոր մը լոյս ընծայել, ինչ որ ներկայ տնտեսական պայմանները թոյլատու չեն: Մեր անձնական յուշերէն քաղուածաբար կու տանք մի քանի տեղեկութիւններ մարդական կեանքի վերաբերեալ, որոնք հաւանաբար չահագոգրեն մարդասէր ընթերցողները:

2. Մ. Մ.— (Հայ Մարմնակրթական Միութիւն) կազմած երիտասարդական այս կազմակերպութիւնը բազկացած բլլալով առաւելապէս առողջ կազմուածք ունեցող երիտասարդներէ, Լիբանանահայ մարդական կեանքէն ներս գործած է որպէս լուրջ կազմակերպութիւն և օգտակար հանդիսացած բազմահարիւր հայ պատանիներու ու երիտասարդներու մտաւոր ու ֆիզիքական զարգացումի տեսակէտով. ունի մասնաճիւղեր Լիբանանի և Սուրիոյ չրջաններուն մէջ: Հ. Մ. Մ.ի վարչութիւնը աշխատած է իր միութիւնը և անոր դրօշը միշտ անազարտ պահել յաջս օտարներուն և Հ. Մ. Մ.ի անդամները կուրծք տալով բազմապիսի դժուարութեանց կրցած ու յաջողած են միութիւնը հեղհեղէ գէպի լուսագոյնին առաջնորդել: Հ. Մ. Մ. անեցած է իր հաւաքատեղին ու խաղաղաշուր Պէյրութի կեդրոն մէկ թաղամասին մէջ. Հ. Մ. Մ.ի մարդադաշար ծառայած է բազմաթիւ հայ և օտար մարդական կազմակերպութեանց ձեռնարկներուն: Հ. Մ. Մ.ի կազմու-

թիւնը 25 երկար տարիներու յիշատակելի կեանք մը կը պատկերացնէ մեզի:

Հ. Մ. Բ. Մ.— (Հայ մարմնակրթական ընդհանուր միութիւն) ևս ունի հին պատմութիւն մը: Եւս երիտասարդական կազմակերպութիւնը առաջին տշխարհաւեր մեծ պատերազմէն անմիջապէս առաջ կազմուած է կ. Պալսոյ մէջ. ընդհանուր պատերազմէն յետոյ շարունակեց իր գոյութիւնը արժէքաւորել և ինչպէս ամենուրեք, Լիբանանի շատ մը շրջաններու մէջ ալ ունեցաւ մասնաճիւղեր: Հ. Մ. Բ. Մ. ի ծառայութիւնը նուազ չէ եղած ուրիշ հայ մարդական կազմակերպութիւններէն. Հ. Մ. Բ. Մ. ի անդամ տղաքները ունեցած են խանդավառ գործունէութիւն և նախանձը չարժամ են օտար շարք մը մարդական ընկերութեանց:

Տալւորիկ.— Դամասկոսի հայ երիտասարդութիւնը ֆիզ—կուլտուրական տեսակէտով նախանձելի գրութեան վերածելու համար Տալւորիկ տնունի տակ կազմուած մարդական միութիւնը, իր հիմնարկութենէն կարճ ժամանակ վերջ արժանացած է Դամասկոսի համարակութեան բուռն գնահատանքին և շատ չանցած այս երիտասարդական ուժեղ կազմը օժտուած է սկստուտական ամէն տեսակ առաւելութիւններով: Տալւորիկ իր կազմութիւնը կը պարտի անդամներու գնահատելի գոհողութիւններուն, իսկ Տալւորիկի գոյատեւութիւնը ապահովուեցաւ ծանօթ դաստիարակ Նշան ֆէօմիւրճեանի անոնց հանդէպ ունեցած բնծայարներութեամբն ու նիւթաբարոյական գոհողութեամբը: Տալւորիկի սկստուտները ունեցած են

իրենց սեփական խաղաղաշարժ ուրանդ միութեան լալոր ազաքները կ'օգտուէին հաւասարապէս իրենց կողմէ ի դարձ դրուած ֆիզ—կուլտուրական զանազան մարզանքներովը։ Այս սկսուածական խումբը կը կրէր մասնաւոր համազգեստ հանդիսաւոր օրերու մէջ և իր նուազախումբովը միասին տարուան յարմարագոյն եղանակին շրջան կ'ընէր Սուրիայ և Լիբանանի կեդրոն քաղաքները։ Տալուրիկի սկսուածական բաժնի ընդհանուր խմբապետն էր Վահան Մխիթարեան։

Վերոյիշեալ երեք նկատառելի երիտասարդական կազմակերպութիւններէն զառ Պէյրութի մէջ տեսնուած են Վասպուրական, Պայքար և Բագրամեան պատուանդաններուն ատկ հայրենաւէր երիտասարդներէ բաղկացած երիտասարդական կազմակերպութիւնները։ Սրանք ֆիզ—կուլտուրական մարզին մէջ ցոյց տուած են օգտակար կեցուածք և արժանացած են ժողովուրդի գնահատանքին։

Արդար ըլլալու համար, պէտք է խոստովանինք թէ՛ Հ. Բ. Ը. Միութեան նախաձեռնութեամբ կազմուած Հայ երիտասարդական Ընկերակցութիւնը (Հ. Ե. Ը.) իր ազգօգուտ գործունէութեամբը Պէյրութահայ ընտրանի դասակարգէն մեծապէս զնահատուած է և երիտասարդական ասարեր կողմակերպութեանց շարքին դրուած է իր արժանաւայել տեղը։

ՀԱՅԱՋԳԻ ԵՐԵՍՓՈՒԱՆՆԵՐ

Յուշազգիս երկրորդ մասին մէջ Լիբանանի բնակչութեան զանազան համայնքներէ բաղկացած ըլլալու պարագան մանրամասն կերպով պարզած ենք և երբ Լիբանանը դարձաւ ներքնապէս ինքնավար պետութիւն մը՝ Փրանսական հոգատար իշխանութիւնը նպատակադրմար գտաւ այս երկիրը օժտել տեղացի բաղկացուցիչ տարրերէն կազմուած վարչական մեքենականութեամբ և պետութեան վաշել օրէնսդրութիւններով. այդ իսկ պատճառաւ խորձր Գամիւէրութեան աջակցութեամբ ու ցաւցմունքներովը ձեռնարկուեցաւ հիմը դնել Լիբանանի անգրանիկ խորհրդարանին: Այս խորհրդարանը պիտի ներկայացնէր համայնքային կոչուած Լիբանանի բոլոր ազգայնականութեան իրաւասու ձայնը և այդ իրաւասու ձայնէրէն երկուքը արուած էր Հայ Ազգին: Հայազգի երկու երեսփոխանները մին՝ Լուսաւորչականը իսկ միւսը՝ կաթողիկէ երկու քոյր հայ յարանուանութեանց լիազօր ներկայացուցիչները կը նկատուէին խորհրդարանէն ներս:

Լիբանանի առաջին խորհրդարանի կազմութենէն մինչև այսօր՝ այսինքն մինչև 1948ին վերջերը ունեցած ենք հետեւեալ Հայազգի երեսփոխանները. — Պ. Պ. Վահրամ Լէյլէկեան, Ապտալլահ Իսահակ (վերջինս հայ կաթողիկէ), Խոսրոֆ Թիւթիւնճեան, Հրաչեօյ Շամլեան, Մովսէս Տէր Գալուստեան և Տօքթ. Մելքոն Հայրապետեան:

Մեր Հայազգի երեսփոխանները իրենց կարելի

բոլոր միջոցներով ջանացած են օգտակար դառնալ թէ՛ Լիբանանի վերելքին ու բարգաւաճումին և թէ՛ իրենց արենակիցներուն :

Սուրիոյ կորհրդարանն ևս իր կազմութենէն ի վեր ունեցած է Հայազգի երեսփոխաններ, յանձինք՝ Հ. Միւլաճեանի, Մ. Տէր Գալուստեանի, Հ. Փափագեանի, Կազապեանի, Ֆէթթէլեանի (Լուս. Համայնք) և Տիգրան Չրաճեանի (փոքրամասնութեանց կազմէ) :

Լիբանանահայ երեսփոխաններու կարգին՝ Սուրիահայ յարգելի երեսփոխաններն ալ իրենց կարելի բոլոր միջոցներով ջանացած են օգտակար ըլլալ թէ՛ երկրին և թէ՛ իրենց պատկանած համայնքին :

ՈՐԻՆԱԿԵԼԻ ՀԱՄԱԳՈՐԾԱՅՑՈՒԹԻՒՆ

Պէյրութի գլխաւոր արտարձանն և հայաշատ թաղամասը կոչու Սեդր—Նահր (Պսւրճ—Համուս) : որ վերջին երկատանեակ մը տարիներու ընթացքին դարձու հայկական խմբաւորման հանդրաւան մը : անդական իշխանութեան, այսինքն նախարարաց խորհուրդի հրահանգով և խորհրդարանի վաւերացումով որոշուեցաւ ունենալ իւրայատուկ թաղապետական խորհուրդ մը : հարկ տեսնուեցաւ — ըստ բընակչութեան թուին ու քանակին — կազմուելիք թաղապետական խորհուրդին հայերը մասնակցին չորս ձայնով՝ ընդ դէմ՝ երեք ձայնի, և այս խորհուրդը

պիտի կազմուէր ժողովրդական ընտրութեամբ: Հա-
կառակ տիրող կարծիքներուն և նոյնիսկ տեղական
իշխանութեանց կողմէ որդեգրուած սխալ ըմբռնու-
մին, վերայիշեալ ընտրական զործին մէջ, հայերը
զուրս եկան միտանալուն ճակատով մը, յաւաստա-
րութեան մտանելով իրենց մասին սխալ մտածողնե-
րը:

Անդր—Նահրի թաղապետական տռաջին խոր-
հուրդին ժողովրդական մեծամասնական ձայնով իրեւ
անգամ նշանակուեցան հետեւեալ ազգայինները.—

Պ. Պ. Վահան Տօնապետեան, Բիւզանդ Քէհ-
եաեան, Պարգեւ Տէր Յովհաննէսեան և Սարգիս Գա-
սապեան (վերջինս՝ Հ. Կ.):

Անդր—Նահրի թաղապետական խորհուրդին
Հայտադրի մեր անդամները տռաջին օրէն իսկ լծուե-
ցան շինարար աշխատանքի և հետզհետէ Պարզ—Հա-
մուտ կոչուած թաղամասը վերածեցին նախանձելի
դրութեան մը, անշուշտ իրենց յարգելի արար երեք
անդամներուն համադրածակցութեամբը:

ԱՊԱՐԻԻԿՆ ԺՈՂՈՎ ՄԵ՛

Սիրելի ընթերցող, մեր ցեղին նկարագրին
հետ չաղկապուած տններկի թերութիւններէն մէկն
ալ զործի մը սկզբնաւորութեանը խանդավառու-
թեամբ սկսիլ և ապարդիւն վերջաւորութեամբ
պսակելն է: Այս կարգի գէպքեր թէ անց-

նալին և թէ ներկայիս տնտեսական եղած են: Առանց երկար խորհրդածութիւններ ընելու, պատճենք իրողութիւն մը:

Պէյրուսթի Յառաջդիմատէր երբեմնի երիտասարդական երկսեռ միութեան մէկ ակումբին մէջ ունեցանք ժողով մը. այս ժողովին կը նախագահէր յայտնի ազգային գործիչ Պ. Կոմսը, իսկ ներկայներուն մէջ կը տեսնուէին ծանօթ ազգային գործիչներ և մեծ մտաւորականներ: Երբեք չեն Պ. Պ. Լեւոն Շանթի, Նիկոլ Աղբալեան, Միհրան Տամատեան, Տօքթ. Մեկքանեան, Մ. Նաճարեան և այլք:

Այս ժողովին նպատակն էր կազմել Հայ—Արար կոմիտէ մը, որուն գլխաւոր գրադումը պիտի ըլլար սիրալիր եղբայրակցութիւն և մերձեցում յառաջացնել երկու տնտեսապէս ազգերուն միջև: Ժողովը յետ երկար խորհրդակցութեան և Մ. Նաճարեանի առաջարկին վրայ որոշեց կազմել երեք հոգի—նոց յանձնախումբ մը որուն պաշտօնը պիտի ըլլար պատրաստել ծրագիր—կանոնադիր Հայ—Արար մերձեցման նպատակը պատկերացնող: Կանոնախումբին պարտականութիւն արուեստ—միայնգումայն պատրաստուած Նրագիր—կանոնադիրը ներկայացնել երկրորդ և աւելի ընդարձակ ժողովի մը, որոնց վաւերացումէն վերջ տնտեսական գործադրութեան պիտի դրուէր:

Այս ժողովին վրայէն տնցած են 22 երկար տարիներ, և սակայն մինչև օրս ո՛չ այդ օրինակ ծրագիր—կանոնադիր մը պատրաստուեցաւ և ո՛չ ալ այդպիսի կոմիտէ մը կազմուեցաւ. . .

ՎԱԽՃԱՆՈՒՄՆԵՐ՝

Հ Ո Ւ Ե Ւ Ո Ր Պ Ե Տ Ե Ր Ո Ւ

Սուրիոյ և Լիբանանի Հայ համայնքը, վերջին քառորդ դարու ընթացքին մէջ կորսնցուցած է կղերական դասէն հոգեւոր մի քանի պետեր, որոնք մեր ազգային կեանքը բեղմնաւորելու տեսակէտով արժանացած են ժողովրդեան լայն յարգանքին և տանցմէ գլխաւորներն են՝ Հայ Կաթողիկէ Պատրիարք և Կաթողիկոս Մեծն Տանն Կիլիկիոյ Արհիպիսկոպ Տ. Տ. Աւետիս Արքեպիսկոպոս Արքիպրեան, Կիլիկիոյ Ծերունագարդ Կաթողիկոս Վեհափառ Սահակ Բ. Խապայեան, Աթուակից Վեհափառ Տ. Տ. Բարդէն Արքեպիսկոպոս Կիւլէսէրեան, Վեհափառ Տ. Տ. Պետրոս Կաթ. Սարրաճեան, ինչպէս նաեւ Երուսողէմի Արքիպիսկոպոս Պատրիարքներ՝ Տ. Տ. Եղիշէ Արքեպիսկոպոս Դուշակեան, Ասկէ գտաւ իջմիածինն ալ կորսնցուց երկու Կաթողիկոսներ, իջմիածնական եկեղեցին ցուտով կորսնցուց նաեւ մի քանի հոգեւոր առաջնորդներ, որոնք երկար տարիներ ծառայած էին իրենց եկեղեցւոյն ու ազգին։

Ս Ա Ն Ճ Ա Փ

Սուրիոյ և Լիբանանի Հայութիւնը հազիւ ինքնամփոփումի շրջան մը բոլորած էր, քաղաքական վերջին և ուժեղ հարուած մը անգամ մը եւս ցնցեց դժբաղդ հայ ժողովուրդը:

Կապիտալիստական մենաշնորհին ուղղութիւն տուող շահադիտական կարգ մը նկատառումներ, տնտէկնկալ կերպով պարտադրեցին Սանճազի հայութիւնը, որ լքէ չէն ու չէնշող դարաւոր օճախը և ապաստան գտնէ Սուրիոյ կամ Լիբանանի կեդրոն քաղաքներուն և գիւղերուն մէջ:

Սանճազի մեր հայ եղբայրները ոչ միայն տնտեսապէս սուժեցին դիւանագիտական աշխարհի այս լարախաղաղութենէն, այլ խեղճ մեր արեւնակիցները ֆիզիքապէս ալ քայքայուեցան մասամբ, զրկուած ըլլալով սննդեղէնի կտրիքներէն:

Սանճազի պարպումը ծանր ու դժուարին կացութեան մատնեց միայնգումայն՝ Սուրիոյ և Լիբանանի ազգ-իշխանութիւնները, և այս պարպումին իբրեւ հետեւանք, յառաջ եկաւ գործազրկութեան անհանդուրժելի կացութիւն մը: Հայ աշխատաւոր դասակարգը, հայ մշակն ու գործաւորը և հայ արհեստաւորներն անգամ իրենց օրական հացը ճարելու դժբաղդ վիճակի մը ենթարկուեցան: Այս հարուածը չափազանց անսպասելի տնտէկնկալ մըն էր հայերուն համար:

ՊԱՂԵԱՏԻՆԵԱՆ ԿՆՃԻՌԻՆ

ԶԱՐԱՂԷՏ ՀԵՏՆԵՒԱՆՔՆԵՐԸ

Ստանձագին պարպումին հետեւանքով Հայու-
թեան կրած տնտեսական հարուածը, հայ աշխատա-
ւորութեան նիւթական փճացումին վախճանը չեղաւ:
Ահաւասիկ հարուած մը ևս որ ուժգնօրէն ցնցեց
այս անգամ հայութիւնը: Այս հարուածը ծագում
կ'առնէր Պաղեստինեան կնճիռէն, որը ունեցաւ իս-
կապէս Հարապէտ հետեւանքներ: Պաղեստինի մէջ շա-
տոնց ի վեր իրենց բոյնը հաստատող մեր հայրենա-
կիցները հարկադրուեցան Պաղեստինի քաղաքական
խառնակ վիճակէն խուճապի մտանուել և իրենց ան-
շարժ ու շարժուն հարատուութենէն հրաժարելով, ֆի-
զիքական գոյութիւննին ապահովելու արդար մտա-
վախութեամբ ապաստանել Սուրիա կամ Լիբանան:
Պաղեստինեան ներքին փոթորկումները, քաղաքական
վերիվայրումները ու զինուորական անվերջ շար-
ժումները այնպիսի արագութեամբ յառաջ բնթա-
ցան, որ ո՛չ միայն հայութիւնը այլ բնիկ տարրերն
ալ խուճապային փախուստի ենթարկուեցան: Մեր
բարեկեցիկ հայրենակիցները, շատերը լքած ըլլալով
իրենց տան կա՛հ կարասիները ու պիտոյքները, լքած
ըլլալով իրենց շուկայիկ հարատուութիւնները, թշուառ
վիճակի մէջ եկան ու հաստատուեցան մեծամբ մա-
սամբ Լիբանանի չրջանին մէջ, ուրանդ արգէն իսկ
բնակարանի չգոյութենէն շատեր անպատասպար կը
մնային կամ տախտակաշէն խրճիթներու մէջ հաստա-
տած էին իրենց բնակավայրերը: Այս անբաղձալի

դրութեամբ մեր արեւնակիցները մինչև մեր այս տողերը լոյս ընծայուելը կը մնան անորոշ ու անհանդուրժելի կացութեան մը մէջ։

Լիալոյս կենք, որ ապագայ մեր յաւատարմորդ պիտի կարենանք աւելի վարդապոյն տողերով աւելի յուսադրիչ նկարագրութիւններով դարձարել... Հենք ուղեր թերահաւատ բլրով ապագային մասին։ Մեր աղքը դարեր շարունակ կուրծք տուած է շատ մը դժուարութեանց, կրցած է իր գոյութիւնը պահել առանց աղարտելու աղագային գիմագիծը. հայ ժողովրդին համար տառապանքն ու թշուառութիւնը եղած են անրաժան մասնիկներ իր հաւաքական հակառակին մաս կազմելով. բայց Արմէններու հարգատ սերունդը բոլոր կարգի խոչընդոտութեանց ու արգելքներու անպարտելի կամքով մը գիմագրելով՝ յաջողած է իր ապագան լաւագոյն պայմաններու տակ կերտել, և այդ պարագան փաստացի իրողութիւն մը դարձաւ վերջին քառորդ դարու ընթացքին մէջ իր պապենական հոգին վրայ ստեղծուած հայրենի օճախովը։

Հ Ա Յ Ր Ե Ն Ա Պ Ա Ր Ձ Ո Ւ Թ Ւ Խ Ն

Հայրենարտագծութեան մարմաջը հայ ցեղին մէջ ծնունդ տուած է Հայ Ազգին գոյութենէն ի վեր, և այս ցանկալի հայրենարտագծութեան իրրեւ հետեւանք հայ ժողովուրդին հարազատները հայ իշխաններու, հայ թագաւորներու անկումէն ի վեր, միշտ

ալ մտահոգուած են իրենց Ազգը անբաղձալի դրութեանէն ձերբազատելով ի մի համալսմբել իրենց պապկնական հողին վրայ) իսկ հայրենի կարօտը հայ պատանիէն սկսեալ հայ երիտասարդն ու հայ մօմիկն իսկ մեր պապերուն հետ համագործակցաբար մզած են շատ անգամներ վառնդիյ և այդ կարօտի սիրտն դարեր շարունակ հայ աշուղները երգած են Արարատն ու Մասիսը և Երագածն ու Անին ու չեն կրցած իրենց ներքին քաղկաւմին իրենց ներքին ընդվզումին ստատ մը զնել և Մեր ժողովարդի ցանկալի բողձանքը կզած է ամփոփուիլ իր հայրենի հողին վրայ) իր արեւնակիցներուն հետ և իր հորապատանքուն մօտ հայ հովիւը և հայ աշխատաւորն ու գործաւորը և հայ արհեստաւորն ու արուեստագէտը քաւորն ալ անխափր այս մտարակին վրայ ունեցած են միտել ցանկութիւն մը այն ալ՝ հայրենի կարօտն է և նրբ քաղաքական վերիվայրումները և Երկու աշխարհաւեր մեծ պատերազմները սկսան փոքր ազգերու անունովը գործել և փոքր ազգերու ազատագրման զօղանջը հնչեցնել և կոչ ըրին աշխարհի քաւոր մեծ ու փոքր ազգերուն որպէսզի իւրաքանչիւրը գտնուայ իր հողին ու հայրենիքին աէրն ու ապուէնը այն տանն հայ ժողովուրդն ալ իր կարգին սենցաւ ճակատագրական ու քախտորոշ շրջան մը որուն շտարհիւ ստեղծուեցաւ Նայիրեան ինքնաւար երկիր սփռեալը գտնուող վերապրող կամ տարագիր հայութիւնը ցնծութեամբ զիմաւորեց քաղցրալուր աւետիսը . . . :

Արարատն ու Մասիսը իրենց սին գաղաթնե-

րէն պահակի պէս կը հսկէին հայկական նորոստեղծ օճախին վրայ) և չուշացան ա՛յնքան սպասուած կարօտալից կոչը հայրենի երկրէն ուղղուած փիւռքի հայութեան: Ներգաղթ գէպի հայրենիք:

Սփիւռքի մէջ ստեղծուեցան ներգաղթի դործը կազմակերպող մարմիններ — ներգաղթի կոմիտէ տնունի տակ) և որոնք մամուլով կոչ ըրին բոլոր հայութեան անխտիր՝ անոնք որ կը ցանկան, անոնք որ կը փափաքին թող պատրաստուին գէպի երկիր մեկնելու: որոնց համար բնծայուեցան ճանապարհորդութեան ամէն կարգի գիւրութիւններ: Սփիւռքի հայութիւնը պալքանեան երկիրներէն սկսած մինչև իսկ կեդրոնական Եւրոպայի խորերը: Պաղեստինէն սկսած մինչև Իրաք եղած հայրենասիրական կոչին պատասխանեցին գրական կերպով: Իրագէն՝ Սուրիոյ և Լիբանանի ճամբով Հոյաստան մեկնողները մեզ վկայեցին թէ՛ Իրագի բոլոր կեդրոն քաղաքներու մէջ եղած հայրենասիրական կոչը մեծ խանդավառութիւն ստեղծած է իրագահայ հասարակութեան մէջ) և այս խանդավառութիւնը զգալիօրէն տեսնուած է ամէն ուրեք:

Պէյրութէն առաջին անգամ ներգաղթողներ բազմահազար տրենակիցներու կողմէ իրենց բնծայուած ողջերթով «Թրանսիրլանիա» մեծ նաւին մէջ տեղաւորուած՝ ճամբայ ելան գէպի հայրենի երկիր) և այն տանն երբ մէկ կողմէ նաւը իր վերջին սուրիչով հրաժեշտի ողջոյնը կու տար Պէյրութ մնացող տրենակիցներուն) ծովափը գտնուող բազմահազար հայութիւնը կ'երգէր «Հէյ կարափան) ջան կարափան) քշիր քս ճամբան) գէպի երեւան...»:

ԻՐԲՆԻ ԵԶՐԱԿԱՅՈՒԹԻՒՆ

Մեծանուն գրողէտ—Վրպասան և անդուգական հայրենասէր անմահն Ռաֆֆի հայկական սղջ աշխարհը դժբախտ պատահարներու ու կեղեքումներու անօրինակ հանդիսաւոր մը նկատած է՝ որովհետեւ անցեալ դարերուն մէջ երբ հայ մեծ ազգը դարձաւ ստրուկն ու գերին օտարազգի մը՝ իր անհատական ու հաւաքական կառուցուածքէն ներս նկարագրային փոփոխութիւններ մտցուեցան և հայը անհատապէս ու հաւաքապէս հարազատութենէն զէպի աշխատեալ տառջնորդուեցաւ։ շերտաւորումը հայ ազգային շըրջագծէն ներս տւերների գործեց։ անմխարանութեան սգին տւերեց հիմքը հայ բնաշխարհին և հայ առմիկն ու անգրագէտ հայ գիւղացին դատապարտուեցան ստրուկը դառնալու կեղեքող ու շահագործող դատակարգի մը։ Սակայն՝ վերջին կէս դարու բնթոցքին լուստտու և յուստտու ցօլքեր մուտք գործելով հայոց արեւաւորայլ երկրէն ներս՝ հայ ժողովուրդը նորանոր արթնամտութեամբ զինուած պատրաստուեցաւ իր կորսնցուցած դարաւոր նկարագրային տւանդն ու հարստութիւնը վերստին ձեռք բերելու միջոցներ որոնել։ այս պարագան հետզհետէ արգիւնտրեր դարձաւ։

Ուստի սիրելի բնթերցող մեր յուշագիրքը երբ կը փակենք, հարկ է որ երեւնամեայ մօտիկ անցեալի կեանքէն դասեր առնենք՝ ազգային կեանքէն ներս նշմարուած իրողութիւնները մեզ հետեւեալ կորակացութեան կ'առաջնորդեն։

Ա. — որ հայ ժողովուրդը քաղաքական, ընկերային, տնտեսական ու ֆիզիքական իր գոյութիւնը կրնայ արժէքաւորել միմիայն **ԿԵՒՐՈՆԱՅԱԾ** գրութեամբ.

Բ. — որ ամիւսքի հայութիւնը, անջատ իր կրօնական ըմբռնումներէն, պարտի ստեղծել միջ—յարանուանական կեդրոնական և ապա շրջանային մարմիններ, որոնք պէտք է վարեն ազգային բոլոր կարգի գործերը միջ—կուսակցական մարմիններու համագործակցութեամբն ու աջակցութեամբը.

Գ. — որ արտասահմանեան հայրենազուրկ հայութիւնը պարտի ծառայել միակ սկզբունքի մը, թէ՛ կուսակցութիւնները **ՄԻՋՈՅՆԵՐ**, իսկ հայրենիքն ու ազգը **ՆՊԱՏԱԿ** դաւանիլ:

Վ Ե Ր Ջ

Շնորհակալութիւններ Պ. Պ. Յովհաննէս Ճիւղանեանին, Ահարոն Ահարոնեանին և Նշան Քէօմիւրճեանին որոնց կողմէ ընծայուած աջակցութիւնը դիւրացուց գրքիս հրատարակութեան գործը:

ՀԵՂԻՆԱԿԸ

Հեղինակին հասցեն. —

MIHRAN NADJARIAN

Pharmacien

Rue Al-Nahr St. Michel- BEYROUTH



— Էջ 83, տող 16րդէն սկսեալ կարդալ հետեւեալը.

Հայազգի երկու երեսփոխաններէն առաջինը կը ներկայացնէր Լսւս. համայնքը՝ իսկ երկրորդը՝ ըլլալով Հայ Կաթողիկէ մը՝ կը ներկայացնէր բոլոր փոքրամասնութիւնները:

— Էջ 84. Սուրիոյ հայ երեսփոխաններու շարքին աւելցնել նաև Պ. Հինտիէ, իբրև Հայ Կաթողիկէ ներկայացուցիչ:

— Հայկ. մամուլի բաժնին մէջ կարդալ նաեւ Հայ Դիր.— տնօրէն՝ Գ. Պաղճեան. գրական մասութիւթ: Դադրած:

9 (= 91.99)

չ = 27

ՀԵՂԻՆԱԿԻՆ ԳՈՐԾԵՐԸ

1. — Էջ մը Տ. Կեռսի արագրութեան 1919
2. — Վարդիս Թմիկը (Ջուրես 1 արար)
3. — Ազաթ Վանստականին Կտակը (Ջուրես 2 արար)
4. — Ժամագործ Մինու (Ջուրես 2 արար երգախառն)
5. — Անմեա Աղա (Ջուրես 2 արար)
6. — Պերլին և Պատերազմը (պրերդ. 3 արար և 2 պատկեր)
7. — Հեթիկ (Իրավեպ)
8. — Գրգանի Տարեկիւր 1933
9. — Իրող քիւնը (Բնկերային Հարցեր)
10. — Անդր — Նանը
11. — Յուշագիրք (Որեւնամեայ Ազգային Կեանք)

ԻՐԱՆԻ ԹԵՄԹՈՒՆ ՀՐԱՏԱՐԱԿՈՒՄԸ

 1. — Միւրաւեանք
 2. — Արմենոնի (6 ռդ Գունդի կեանքէն առնուած վեպ)
 3. — Ճգումուած Գանկը
 4. — Նայիմե (Իրավեպ)
 5. — Արաբունին »
 6. — Կիլիկիան Յուշեր
 7. — Ճամբու Նօքեր
 8. — ԻՐԱՆԱՍԻՐԱԿԱՆ ՆՈՒՍԱՎՈՐԸ մը
 9. — Գրադասական Չայի Տառապելոցի

Ա Ն Տ Ի Պ

 1. — Բժժկական
 2. — Սիրոյ Տանարը (Մահաւարձ վեպ)
 3. — Իմաստուն Կարծիքներ
 4. — Ջերմուկ, պատմական ուսումնասիրութիւն մը
 5. — Հայ Յեղ. Առաքեալները. (տաւ 2 արար)

[10]

ԳԱՍ Հիմնարար Գիտ. գրադ.



FL0233587

A $\frac{11}{80315}$